

ԹԵՂԱԲՐԻԵՍՄԱԿԱՆ-ԹՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԱՔԱԹԱՔԹԵՐ

Աղբիւրի տարեկան բաժանորդագինն է 3—28 կ. իսկ Տարազինը 6 ռուբլի. առանձին №-ը 25 կոպ. Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюстр. журн. Агбюръ կամ Taraz. Իսկ արտասահմանից՝ Tiflis—Caucase, rédaction des journ. illustrés Agbur կամ Taraz.

№ 7 կիրակի 17 փետրուարի երկրորդ տարի 1891

Մեծ մարդիկ

ՆԵՐՍԷՍ Ե. ԱՇՏԱՐԱԿՑՈՒ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Մարդիկ *մեծ* են անւանւում, *մեծ* են դառնում՝ ոչ այնքան իրանց. ժամանակակից հասարակական կարծիքի դատավճռով, որքան պատմութեան վճռով։ Մարդկանց ժամանակակից հասարակական կարծիքը անհաստատ է, տատանող է, խառն է բազմատեսակ կրքերի հետ, անբաժան կապած է շրջապատող հանգամանքների և շատ անգամ բռնի տիրապետող սկզբունքների հետ։ Մարդիկ միմեանց դէմ առ դէմ այնքան անկեղծ չեն, որքան միմեանց բացակայութեամբ։ Այս ցաւալի է, վայել չէ իր բարձր կոչումով պարծեցող մարդկութեան, բայց փաստ է, իրականութիւն է։ Մարդուս թէև ընծին է տիրապետող լինելու զգացմունքը, բայց նա միևնոյն ժամանակ ունի իր մէջ սարկական ոգի, որ արտայայտւում է իսկոյն, երբ նա հանդիպում է իրանից բարձր ոյժի։ Այդ երևոյթն աւելի նկատելի է և աւելի զարգանում է փոքր ազգերի ու համայնքների մէջ, որոնք երկրի բնական դիրքի պատճառով կորցնում են իրանց ինքնուրոյնութիւնը տեղի տալով աւելի մեծ ոյժի և առաջ ակամայ, յետոյ կամաւ ընդունում են այդ ոյժի առաջարկած օրէնքները, թէև դրանք չը համապատասխանէին նոյն իսկ ոչ տեղական, բնական պայմաններին, ոչ տեղական մարդկանց ֆիզիքական և հոգեկան կազմակերպութեան և հետևաբար ոչ

Նիկոսիս Ե.
† 13 փետրուարի 1857 թ.

էլ ընդհանուր բնութեան օրէնքներին։ Բայց թէ ընդհանուր մարդկութեան (մարդակերներին չենք հաշւում), թէ մասնաւոր համայնքների իւրաքանչիւր անդամի մէջ կան անտարակոյս բարոյական սկզբունքներ, որ նա գուցէ ուրախ կըլինէր գործադրել, բայց ստիպւած է խեղդել նրանց, թմրացնել, ժամանակաւոր մոռացութեան տալ, յարմարացնել ոչ թէ բնական, այլ այսպէս ասած վերահաս հանգամանքներին։ Ի հարկէ որոշ ժամանակի ընթացքում, մի քանի սերունդներ անցնելուց յետոյ այդ ինքնաղաւաղումը կարող է հասնել իր ծայրահեղ կատարելութեան և՝ մի ամբողջ համայնքի կամ ազգի մէջ կարող են երևալ բարոյական մահւան նշանները, իսկ նշաններից մինչև մահը հեռու չէ։

Այս տեսակ դէպքերում բնութիւնը մի անխախտելի և յամառ օրէնք ունի, որը մենք կարողանում ենք միայն տեսնել և խոստովանել, բայց դէռ բացատրելու ոյժ չունինք։ Բնութիւնը երբեմն, շատ անգամ անսպասելի կերպով մարդկութեան համայնքներին ընծայում է այնպիսի անհատներ, որոնք իրանց մէջ կենտրոնացնում են մի ահագին բարոյական ոյժ, որը ժողովրդի մէջ ցիր ու ցան եղած ու թմրած բարոյական ոյժից աւելի մեծ է լինում։ Մենք միայն խօսում ենք երևոյթի լաւ կողմի մասին, լինում է և դրա հակառակը մի և նոյն ոյժով։ Այդ մարդիկ բարձրացնում են մինչև իրանց վեհութիւնը ընկնելու մօտիկ ժողովուրդը և իրրև անընկճելի հաւատարմատար

կանգնում են մարդկութեան դատաստանի առաջ, կատարելապէս համոզելով մարդկութեանը, որ այս ինչ, կամ այն ինչ համայնքը ընկած չէ, մեռած չէ։ Ինչ տեսակ ծնունդ է դա, ինչ ժառանգական օրէնքների հիման վրայ են ծնւում այդ մարդիկ, զոնէ մեր գիտեցած մարդաբանութիւնը (ֆիզիօլոգիան) և կենսաբանութիւնը (բիոլոգիան) ոչինչ պատասխան չեն տալիս այդ հարցերին։ Բայց ի հարկէ կըտան. մենք համոզւած ենք և հաստատում ենք գիտութեան յառաջադիմութեանը։

Այդ տեսակ մարդկանց ընդունւած է հմտաբար անւանել ու նրանք այնքան աւելի մեծ են և այնքան աւելի զօրեղ, որքան աւելի ժողովրդի ստորին խաւերից են ծագում, առանց կանխապէս չփւելու քաղաքակրթւած աշխարհի խաւերին։

Զարմանալի է, տարօրինակ է դրանց ոյժն ու ազդեցութիւնը. դրանք ամբողջ դարերով առաջադէմ են լինում քան ժողովուրդը. յետ մընացած ժողովրդին քաշում են մինչև իրանց հասցնում և դեռ մի քանի դար էլ առաջ մղում։ Դուք տեսնում էք դրանց ամենաբարձր գահերի վրայ բազմած և նրանց մէջ ճանաչում էք բոլորովին բնական մարդուն, բնական բարոյականով խօսելիս չատ հասարակ բաների վրայ, բայց խօսելիս միաձև ամենքի հետ՝ սկսած ամենատգէտ և ճնչւած գիւղացուց մինչև գիտնական փիլիսոփան ու տիրապետող թագաւորը։ Մի զէնք ունին դրանք միայն, այն է՝ ճշմարտութիւն, որն ամենքին հասկանալի է, բայց ոչ ոքի հասկանալի չէ այդ զէնքի գործածութեան ձևը թէև նա այնքան, այնքան հասարակ է։ Այդ էլ երևի հանճարների իրանց գաղտնիքն է։ Այո՛, ծնում են ազդերը հանճարներ։ Բայց և պատահում է, որ երկունքն այնքան ծանր է լինում և ծնունդն այնքան մեծ, որ քայքայում է ամբողջ օրգանիզմը և մահ պատճառում նրան։ Միթէ այդպէս չէ՞ Իսրայէլի որդոց պատմութիւնը։ Թող մտածէ ընթերցողը և տեսնէ։

—

Մենք չէինք կարող մեր այս մտածմունքները չըհաղորդել ընթերցողին, քանի որ այս ամսոյս 14-ին կենդանացաւ մեր մէջ այն մարդու յիշատակը, որի անունով ամեն մի հայ մինչև այսօր պարծենում է և դեռ պիտի պարծենայ։ «Ներսէս Ե. Կաթողիկոս». արտասանեցէք որտեղ ուզում էք, ինչ հայկական հասարակութեան մէջ ուզում էք ու տեսէք ինչ գեղեցիկ արտայայտութիւն է ստանում հայի երեսը, որքան էլ վատ հայ ու վատ մարդ լինի։ Ո՞վ չըգիտէ նրա կենսագրութիւնը, ո՞վ չըգիտէ նրա արած գործերը, միթէ խնդիրը կենսագրութեան մէջ է. քի՞չ կան սուտ կենսագրութիւններ։ Ներսէսի և նրա նմանների կենսագրութիւնը ամբողջապէս կարդացւում է մարդկանց ուրախ երեսին, նրա անունը տալիս։

ՎԵՐՋԻՆ ՎԷՐՔԵՐ

Ը.

ԵՐԿՈՒ ՈՒՂԵՒՈՐՆԵՐ

Աշնանային քաղցրիկ արևը տարածւել էր Զբաբերդի անսահման անտառների վրայ։ Հոկտեմբերի այն պարզ օրերից մէկն էր, որի նմանը չատ սակաւ է տեսնում թանձր անտառների և լեռների երկիրը։ Մի մաքուր ու թարմ, մրսացնող օդ, մի հիանալի կապոյտ երկինք և մի հեզ արեգակի տաքացնող լոյս—դրանք էին այդ օրւայ զարդարանքը։

Դեռ արեգակը կէսօրւայ տեղին չէր հասել և նրա լոյսը հազիւ էր կարողանում փոքրիկ չերտեր դցել անտառային նեղ ճանապարհի վրայ, որը Եղիշէ առաքեալի վանքի խոր ձորից բարձրանալով դէպի Դասատակերտ գիւղը և այդտեղից անցնելով, հասնում էր Տօնաշէն գիւղը և յետոյ իջնում Թարթարի ձորի վրայ։ Այդ ճանապարհը դեռ ևս խոնաւ էր աշնանային թանձր մշուշներից. նրա վրայ թափւած դեղին տերևների վրայ դեռ նստած էր առաւօտեան եղեամը. սառած տերևները խշխշում էին, անտառում անորոշ չչուկ էին տարածում երկու ձիաւորների արագ արշաւանքից։ Այդ ձիաւորները հասել էին Տօնաշէնի փոքրիկ եկեղեցուն և ճանապարհից դուրս չըգալով, դիմեցին դէպի գետի ձորը։

Ձիաւորներից մէկը մի գիւղացի մարդ էր, որ կըրում էր Ղարաբաղի գիւղացու հագուստը. տրեխներ, դեղնագոյն կոպիտ չալի չուխայ, որի վրայով կապած էր լայն կապոյտ գօտի և այդ գօտու կողքից բռնած երկաթէ կեռից կախ ընկած էր մեծ, արծաթապատ խանչալը։ Միայն այդ չէր այդ մարդու զէնքը։ Նրա ճտից կախ ընկած էր երկար հրացանը, որի կոթը ծածկւած էր զանազան քանդակներով զարդարած արծաթով, իսկ փողի վրայ փայլում էին հինգ մատի չայնութեամբ դեղին օղակները։ Երկայն ու կեռ թուրը կախ ընկած էր նրա ձախ կողքով և մի ծայրով ծեծում էր սև ձիու կողը։ Մարդը գըլխին ծածկած էր կարմիր մեծ փափախ, որի տակից երևում էին նրա չագանակագոյն, խոր դնացած աչքերը, լղար և նոր ածիլած երեսը և այդ երեսի համարեա կէսը բռնող հաստ և թուխ բեղերը։ Նա երբեմն թեթև կերպով չարժում էր սանձը և սև նժոյգը սկսում էր ոստոստալ, պար գալ, գլուխը դէպի վեր ցցած և քթածակերը լայնացրած։ Ձիաւորը ձիու համարձակ չարժւածքներից փառաւորւում էր, հիացած նրան էր նայում և ցած ձայնով զգուշացնում էր նրան։ Ձին խլչում էր ականջները և մանրացնում էր իր ոստիւնները, իր պատյանները։

Ամեն անդամ, երբ սև նժոյգը այդպէս խաղացնում էր իր տիրոջը, միւս ձիաւորը, որ յետ էր մնում, մտրակում էր իր սպիտակ ձիուն և հարկադրում էր նրան մանը քայլեր անելով վազէվազ հասնել սեի ետևից։ Սպիտակ ձին թէև չունէր իր ընկերի խրոխտ տեսքը, մեծ հասակը, թէև չըգիտէր խաղալ, պար գալ, բայց բաւական աշխոյժ էր, գնում էր եռանդով, ինչպէս ասում են, երեխայի պէս տոտիկ տոտիկ անելով, գլուխը անդադար վեր ու վայր չարժելով։ Նա մի պինդ, այդպիսի լեռնոտ տեղերին յարմար կենդանի էր և, ինչպէս երևում էր, վատ անուն չունէր. որովհետև սև ձիու վրայ նստածը երբէք չէր ծաղրում սպիտակի վրայ նստածին, երբ սա բարձրացնում էր իր մտրակը և շրմփացնելով հարւածում էր, նրա ետևից հասնում։

Սպիտակ ձին իր կազմւածքով, իր բնաւորութիւնով հեծեալի արժանի ծառան էր, մի ծառայ, որ բոլորովին համապատասխանում էր իր տիրոջ կարգին. նրա վրայ նստածը մի վարդապետ էր։ Վարդապետը հասակով իր ընկերից էլ բարձր էր, բայց հագուստով նրանից չէր զանազանւում. նա էլ հագած էր տեղական կոպիտ, բայց

կապույտ չալից կարած վերարկու (վարաջայ) և արեխներ։ Սաթի պէս թուխ միրուքի մէջ նկատելի էին սպիտակ մազեր։ Բայց ոչ այդ մազերը, ծերութեան նշանները, ոչ էլ վերարը, որի ծայրերը իջնում էին մինչև նրա թաւ յօնքերը և սովորաբար կուսակրօն հոգևորականի ամօթխածութիւնն էին յայտնում մարդկանց, չէին տալիս այդ մարդու դէմքին իրանց պատշաճի արտայայտութիւնը. նա չունէր այն խաղաղ և հնազանդ տեսքը, որ վանքում ապրած և ծերութեան հասած կրօնաւորին է յատուկ։ Այսպիսի մի կարական վէճ արձակում էին նրա աչքերը։ Երկու սև ու խոշոր աչքեր, երեսի սեւացած կաշու հետ համաձայնած՝ համարձակութիւն, վեհանձն հպարտութիւն էին յայտնում. կամ խոր էին թափանցում, երբ կանգ էին առնում մարդու վրայ, կամ թէ անհանգիստ դէս ու դէն էին չարժւում, լողում էին մի աներևոյթ հեղուկի մէջ, որի եթէ գոյնը դտնէր, անպատճառ սև պիտի լինէր և այդ ժամանակ աչքերը մի բան էին որոնում, մի վտանգի էին սպասում։

Նրանք Տօնաչէնից հեռացան, գնում էին Զրամէջ գիւղի մօտով։ Ամայի և յաւիտենական լռութեան մատնուած գիւղը, իբրև մի նոր մարած կեանքի պատկեր, տխուր տպաւորութիւն էր գործում։ Կարծես թէ կենդանի հոգին նոր էր դուրս եկել առողջ մարմնից, բայց չ էր հեռանում, այլ ափսոսում էր, դեռ ուզում էր քսել գիւղին, նորից կենդանացնել։ Անցնողը նայում էր, և կարծում էր, սպասում էր, թէ ահա բաց դռնից մի մարդ դուրս կը գայ, մի շուն կը հաչէ և նրա հոտոտելիքը կը գայ նոր թռուած հացի սխորժելի հոտը. կարծում էր, թէ իր աչքը տեսնում է երդիկի ծուխը և ականջը լսում է հեռու տեղ լաց լինող երեխայի թոյլ ձայնը։ Բայց այդ գիւղում մի հատ կենդանի արարած չը կար։ Դիակը դեռ թարմ էր, դեռ չէր լուծւել, այլանդակւել, և մարդու աչքն էր խարում։

Առջևից գնացող ձիաւորը ձգեց սանձը, սև ձին ըսկսեց հանդարտ գնալ. ինքը ձիաւորը, թամբի վրայ շուռ եկաւ և գլուխը կախ արած նայում էր գիւղին. իսկ երբ առաջը դուրս եկաւ մի տուն, որի երեսը դէպի ճանապարհն էր դարձրած, մի ցածրիկ, փոքրիկ խրճիթ, որի կողքին կանգնած էր աղբի մեծ կոյտը,—նա մի քանի անդամ տխուր կերպով գլուխը չարժեց։ Վարդապետը նկատեց նրա այդ տխրութիւնը և ասաց.

—Հը, Արզուման, սիրտդ այրւում է տեսնելով այդ տունը, հա։

—Այրւում է, հայր սուրբ . . . Աստուծուց ծածուկ չէ, քեզանից ինչ ծածկեմ։ Ախր այս տեղերը, այս տունը, այս բակը, այս աղբահարը ինձ համար ինչ են եղել, հիմա ինչ են։ «Անցած օրին օր չի հասնիլ», աւելացրեց նա թուրքերէն։

—Ի հարկէ, ի հարկէ, որդի։ Մի ժամանակ օր ու գիշեր չէիր հարցնում, մէկ էլ տեսնում էի՝ ձիուդ գլուխը դէպի Զրամէջ էիր դարձնում։ Այն ժամանակ Մանիչակն այստեղ էր։

—Է՞, հայր սուրբ, դու ինչպէս կիմանաս, թէ ինչ էի ես։ Աստուած վկայ է, սրանք մարդիս չեն դնալ, որքան կենդանի եմ, միշտ, երազում թէ արթուն, պիտի յիշեմ Զրամէջի այս տունը։ Այս տան շունն էլ աչքիս լաւ էր երևացել. և ոչ միայն շունը, այլ և հաւը, կատուն, հորթը . . . Նա շատ էր գնում Տօնաչէնի գերեզմանատունը, նստում էր գերեզմանաքարերի վրայ իր հասակակից աղջիկների հետ։ Ես էլ լաւ սովորել էի, ճանապարհս գերեզմանատան մօտովն էի դցել. յանկարծ դուրս էի գալիս, նրա աչքին երևում. եթէ դու տեսնէիր թէ ինչպէս էր նա տեղից վեր թռչում և ինձանից փախչում . . . Նա վազում էր, ես նրա ետեից ձիով. նա թփերի տակն էր մտնում, քարերի ետևն էր քաշւում, բայց չէ . . . ես տեսնում էի նրա կարմիր շորերը, լսում էի նրա կըրծքի վրայ շարած փողերի զընգզընգոցը։

—Հա, ճշմարիտ է, Աստուած արժանի անէ, լաւ աղջիկ է, մի քանի անդամ էլ ես եմ տեսել նրան։ Եթէ իմ խեղճ գլուխը ողջ կըմնայ, իմ բաժին «պահպանիչը», հօ գիտես, պատրաստ է քո և Մանիչակի գլխի վրայ։

Արզումանը, ուրախացած հայր սուրբի այդ խօսքերից, վերցրեց փափախը և բարձր ու զիլ ձայնով մի տխուր բայաթի սկսեց, որի մէջ յայտնում էր իր թախիծը, իր որտամաշ վիշտը հայրենիքից, «վաթանից» հեռանալու մասին։ Երբ երգի վերջին առաձգական ձայնը մարեց, պատճառելով հեռու անտառներում մի թոյլ արձագանք, հայր սուրբը հարցրեց.

—Ինչու՞ Մանիչակին Գանձակի հողը չը տարաբ. այնտեղ մեր մարդկանցից շատ կան։

—Ձեմ ուզում . . . Գիւլստանցիք լաւ մարդիկ են. Զովուռ-Հաբու տղէրքը մի մի սրբած թրեր են, նրանց մօտ ապահով կըմնան։ Մէկ էլ այն, որ Գիւլիստանը մեր հողից մօտիկ է։

—Հա, այդ ճշմարիտ է, պատասխանեց վարդապետը.—ուր է, երբ պիտի կատարւի Մելիքի միտքը. երբ մեր մարդիկը յետ կը դառնան էլի իրանց տունն ու տեղը չէն կանեն։

—Ես վախում եմ, հայր սուրբ, կէսի կէսը յետ չի դառնալ։ Ուրիշի հող գնացողը, հեռու ճանապարհի սովորած տունը դերու է նման. էլ ինչպէս յետ կը դառնայ։ Ձե՞ս տեսնում. գնացողը յետ էլ չի նայում, որ իր տան ճանապարհը մտքից չը գցէ։

—Է՛հ, Արզուման, դու միշտ վատն ես խօսում։ Խեղճ չենք, որ այդպէս լինի։ Աստծու օգնութեամբ ցրիւ չենք գալ, էլի մեր օթեանը կը հաւաքւենք։

—Բայց, հայր սուրբ, կարգդ վկայ է, մելիքի ասածը իսկի իմ խելքիս չի հասնում։ Անողը իր տանն էլ կանէ, ինչու՞ ենք այսպէս խղճացել։

—Մելիքի միտքը ես հասկացել եմ։ Այստեղ, մեր երկրում, դու խօ տեսնում ես, թէ ինչ է լինում։ Մեզանից գոյացած որդը մեղ ուտում է. թուրքերը մտել են մեր երկրի մէջը, ցրւել են մեր գիւղերում. բանն այնպէս է դառել, որ հարևանութիւն անելն էլ երկիւղալի է։ Այս մի գիւղը քո կողմն ես դցում, տեսնում ես, որ միւս գիւղը զօռով ձեռիցդ խլեցին, այսօրւայ բարեկամդ էգուց քո թշնամին կը լինի։ Մեր բոլոր ճանապարհները թուրքերը ճանաչել են, պրծել, մեր տների բոլոր գաղտնիքը գիտեն։ Մելիքն էլ տեսնում է այդ բոլորը և ասում է. ժողովուրդս կը հանեմ այս թշնամի երկրից, կը տանեմ ու մի լաւ տեղ կը պահեմ. ինքս էլ կը հալածեմ, կը ջարդեմ թշնամիներիս, դուրս կանեմ իմ երկրից, յետոյ էլ կը գամ կը նստեմ իմ տանը։ Գանձակի հողը այնքան հեռու չէ մեզանից։ Այս մեր մելիքի խելքն է. ի հարկէ, նա լաւ կը հասկանայ։

Արզումանը կարծես չը լսեց այդ խօսքերը, քիչ լուռ դնալուց յետոյ շարունակեց իր առաջւայ խօսակցութիւնը.

—Է՞, հայր սուրբ, մեր երկիրը, մեր երկիրը . . . Հարիւր Գանձակ լինի, մեր երկրի քաղցրութիւնն ուրիշ

Գամիտ նաւամ

ԲԱԼԱԽՍԱՆԻ Ճառֆի բուրգ (վիշկա) ամերիկական սիստեմի.
ՆԱՖԹԻ ՇԱԴՐՎԱՆ.

է . . . Հրէն . . . Ախ, Մռաւ, Մռաւ. Արզումանը քեզանից հեռացաւ, քո ջրերը, քո ձորերը մեկ էլ ո՞րբ պիտի տեսնեմ: Մռաւ, թէ դու իմ առաջուայ աշխարհն ես, դէպի քեզ քաշիր այն մարդկանց, որոնց հետ պիտի կուենք. քո բարձր դագաթին ես հեշտ եմ մարդ մորթում:

Նա խօսում էր Մռաւի բարձր դագաթներից մէկի հետ: Այդ հսկայ բարձրութիւնը, կարծես, երկնքի երեսից հաւաքում էր ամպերը և իր գլխին փաթաթում: Այդ իսկ բոլորին դագաթի շուրջը սողում էր սպիտակ մշուշը: Աշնանային օրը ձիւնոտ երկրին յատուկ տարօրինակ տեսարան էր ներկայացնում. այստեղ պարզ և զեղեցիկ օր էր, իսկ այնտեղ, բարձրում, մշուշը ոլորւում էր, մոխրագոյն ծածկոց էր փռում անտառների և սոսկալի վիհերի վրայ: Էլի Արզումանը երգեց և այս անգամ նա իր սրտի «ախը» նմանեցնում էր այդ թանձր մշուշին. դա, այդ ախը, երգի ասելով, այն իսկ մշուշն էր, որ դուրս գալով խոնաւ ու նեղ անկիւններից, այնպէս տխուր ու տրտում քսւում է սարերին, տարածւում է, ամեն ինչ բռնում, ծածկում:

—Օրհնեալս, օրհնեալս, իմ որդի, բացականչեց վարդապետը, աչքը չը հեռացնելով Մռաւի դագաթից:—Տէր Աստուած, ո՞րբ մեր հայերը կազատւին այդ ախ ու վայից:

—Երբ մեր ոսկորները հողում փտած կըլինին, պատասխանեց Արզումանը:

—Այո, խեղճ մենք . . . չենք տեսնիլ, փտած կըլինինք: Աստուած վերջը բարի անէ, ես թէև հաւատում եմ մեր մելիքին, բայց սրտումս էլի մի բան կայ: Ես գիտեմ որ նա խելօք է, ողորմածհոգի հօր որդին է, շատ նուրբ բաներ է հասկանում, որոնց մեր խելքը չի հասնիլ . . . Նա ասում է Իբրահիմ խանին ջարդելու համար Զրաբերդը պիտի դատարկ մնայ մի քանի ժամանակ, մենք էլ ասում ենք՝ ո՞վ գիտէ, գուցէ այդպէս լաւ լինի: Բայց ես էլ վախում եմ. չըլինի՞ թէ ժողովուրդը մի երկու տարուց յետոյ յետ դառնայ, բայց այն ժամանակ իր տանը նստած չուն, դայլ տեսնէ: Նայի՛ր, նայիր Արզուման . . .

Նրանք անցնում էին մի անտառապատ բլրի տակով, որտեղ դեռ մնում էին Զրամէջի դոմերը: Այդտեղ էին գիւղացիք տաւար պահում. այժմ միայն հողաշէն դոմերն էին մնում:

—Տես ո՞վ է մեր դոմերում ապրում, Արզուման:

Դոմից դուրս էր գալիս մի դայլ: Նա հանդարտ դուրս եկաւ, քիչ կանգնեց, քիչ նայեց և յետոյ էլի ներս մտաւ իր մեծ պոչը ետևից քարշ տալով:

—Ինչ սպանես, խեղճ է, խօսեց վարդապետը.—մարդ չըկայ, թող դոնէ նա ապրէ մարդու տանը . . . Խեղճ է...

—Ախ, վարդապետ, էլի գժւեցիր, ասաց Արզումանը իր ձիու գլուխը դէպի վարդապետը դարձնելով.—հաւատացիր, եթէ ինձ թոյլ տային, ես այդ բոլոր մարդկանց որոնք գնում են ու յետ չեն նայում . . . կըկոտորէի: Մէկ մեկ կըկոտորէի, մի հատն էլ չէի թողնիլ:

Նա մի բոլէում կատաղել էր. նրա աչքերը վառւել էին դայլի աչքերի նման. նա ձեռքը տարաւ դէպի թուրը: Վարդապետը, ինչպէս երևում էր, գիտէր, թէ ինչպէս պիտի վարւել այդ կատաղի մարդու հետ, ինքն էլ աչքերը պլշեց, յօնքերը կիտեց և իր ձին նրա վրայ քշեց. նա այժմ կանգնած էր ասպանդակների վրայ, մի ձեռքով յետ էր դցել վերարկուի լայն փէշը և այդ փէշի տակից երևում էր մեծ սուրը:—Արզումանը յետ դարձրեց իր ձին, խէթ-խէթ նայում էր դէպի յետ, դէպի վարդապետը. նրա առջևը, ճանապարհի կողքին մի խրամատ կար. նա խթեց իր ձիու կողքերին, ձին թռաւ խրամատի վրայով և նա այդ ժամանակ էլի գոռաց.

—Կըկոտորեմ . . .

—Իսկ Մելիք-Մեժլումին . . . նրան ինչ կասես... կըկոտորես . . .

Վարդապետը հասել էր նրան և այդ խօսքերը նորից կրկնելով նրա երեսին էր նայում: Արզումանը գլուխը կախ արաւ, ուշադրութիւն չդարձնելով թէ ինչպէս տաքացած ձին խաղում էր նեղ կածանի վրայ:

—Էհ, այս տեսակ խօսքերը դատարկ են, դարձեալ խօսեց վարդապետը, երբ քիչ էլ առաջ գնացին.—այսօր մենք գործի մարդիկ ենք, մեզ գործ կատարել են յանձնել: Տեսնում ես. քեզ Թիւրի-Արզուման են ասում, ինձ Դալի-Մահրասայ: Մենք պէտք է մեզ ցոյց տանք: Ողորմածհոգի Մելիք-Հաթամը միշտ կասէր թէ մենք Զրաբերդի վերջին մարդիկն ենք, մեզանից վատը չըկայ, որովհետև կարողանում ենք, բայց չենք անում: Դու ինձ այս բանն ասա: Տե՛ս, ահա արեգակը կէս օր է արել: Եղուց օրւայ այս իսկ ժամանակը Սարգիս եպիսկոպոսի հետ պիտի անցնենք այս տեղով թէ չէ:

—Կանցնենք, եթէ այս գիշեր չըքնենք, պատասխանեց Արզումանը:

—Խօսք չըկայ, չըպիտի քնենք: Ուրեմն ձիուդ հասկացրու, որ վազ ենք:

Նրանք սկսեցին արագ արշաւել: Կարճ միջոցում Թարթարն անցած՝ գնում էին դէպի Մեծ-Շէնը տանող ճանապարհով:

Ճանապարհը ծմակի միջով էր: Այդ ծմակը չէր թոյլ տալիս մի բան տեսնել, այնքան խիտ էր, թանձր. ճանապարհորդները միայն իրանց ճանապարհն էին տեսնում և ծմակի մի փոքր անկիւնը:

Մի տեղ նրանց արագ ձիարշաւից մի ինչ որ մարմին, խշշացնելով ճիւղերն ու տերևները, արագութեամբ խփեց ծմակի խորքին:

—Սպասի՛ր, ասաց վարդապետը իր ընկերին.—այստեղ մի բան աչքս ընկաւ. այն ի՞նչ էր, որ այդպէս փախաւ:

Եւ նա ձիուց կախ ընկած նայում էր ծառերի տակ:

—Էլի դազան կըլինի, ո՞վ կայ հիմա մեր երկրում, պատասխանեց Արզումանը, ինքն էլ նայելով ցոյց տուած տեղին. բայց իսկոյն ուղղեց իր սխալը:—Չէ՛, մարդ է, մարդ, ա՛յ այնտեղ . . .

Վարդապետն իսկոյն թռաւ ձիուց:

—Եթէ թուրք է, ասաց Արզումանը, իմացիր, որ բախտ ունինք. այս գիշեր ուրախ ճանապարհ կըդնանք, հանաքներ կանենք. դրանց արիւնը միշտ ինձ հանաք անել է տալիս:

Արզումանը, այդպէս խօսելով, ձիուց թռաւ և առաջ գնաց վարդապետի հետ:

—Թուրքի նման չէ, պատասխանեց վարդապետը տխրութեամբ:

Երկուսի աչքի առաջ այժմ պարզ երևում էր մի մարդու չորացած, փայտացած դէմքը, որ պլշած նայում էր նրանց իր դարանից:

—Հայ է, դեռ ճանաչում եմ թէ որտեղացի է:—Եւ վարդապետը կանչեց նրան.—ա՛յ տղայ, արի՛ այստեղ:

Հայը այդ ձայնից աւելի ևս չփոթւած, սարսափով ձեռքերը տարածեց և կրկին գնաց դէպի անտառի խորքը: Արզումանն էլի կատաղեց:

—Այդ չանը պէտք է սպանել, կտոր կտոր անել, գոչեց նա և վազեց դէպի այդ մարդը, եռեից իր ձին քաշելով։ Վարդապետը բաց թողեց իր ձիու սանձը և վազեց բռնեց իր ընկերի ձեռքը, չլթողեց որ առաջ գնայ։

—Սպասիր, անաքանդ, ինչ ես անում։

Ապա ինքը դառնալով դէպի այդ զարմանալի մարդը, որին բաւական մօտեցել էր, ասաց հանդարտ կերպով, սիրտ տալով.

—Արի, այ տղայ, արի այստեղ, ձեռս համբուրիր։

Մարդը յանկարծ տեղից չարժուեց և ձեռքը դնելով իր փափախի վրայ, մօտեցաւ ու նրա մեկնած ձեռքը համբուրեց։

—Տօ, անիծուածի որդի, ինչ ես սատկում, գոռաց Արզումանը այն ժամանակ, երբ վարդապետը նրան սիրտ էր տալիս.—ինչ կայ, որ վախչում ես. մարմինդ պահելու համար, հա . . . Տօ, մի օր ծնուել ես մի օր էլ պիտի սատկես . . . Փախչում էր այնպէս, կասես թէ վերաւոր արջ լինի։ Ախ, թողնեն մի օրում կրկոտորեմ բոլոր վախկոտներին։ Գլուխը կախ արած, կնիկ մարդուն աչքս չընտեսնէ. զուր են այս հողը կոխ տալիս։

Անծանօթը այդ խօսքերից սկսեց լաց լինել։ Վարդապետը մի ձեռքով դէն հրեց Արզումանին, միւս ձեռքը քաղցրութեամբ դրաւ անծանօթի ուսին և ասաց.

—Լաց մի լինիր, որդիս։ Դու մոխրաթաղցի չէս։

Գիւղացին գլուխը չարժելով այո ասաց։

—Ճանաչում եմ. կարծեմ Բաղդասարի եղբայրն ես։

Գլխի նոյն տեսակ չարժումով գիւղացին հաստատեց, որ այդպէս է։

—Ապրես, շատ ապրես, որդի։ Հայր ու մայր ունիս։

—Չէ, չունիմ, խօսեց նա վերջապէս։

—Կարող ես այս դիշեր մեզ հետ Դանձասար գնալ։

Գիւղացին ապուշի պէս նայեց նրա դէմքին։

—Հեռու չէ, մենք քեզ կըտանենք, մի վախիր։

—Աստծու սէրին ինձ բաց թող, հայր սուրբ։

—Ի՞նչ կայ որդի, էլի էգուց գիւղը կըգնաս։ Էգուց մենք էլ պիտի յետ դառնանք. առաջ գնա . . .

Գիւղացին էլի սկսեց լաց լինել։ Արզումանը, որ այդ խօսակցութեան ժամանակ հազիւ էր իրան պահում, սարսափելի ձայնով գոռաց.

—Հը՞, էլ ինչ կայ, չես կարողանում հաց ուտել, կըծամենք, բերանդ կըդնենք . . .

—Չէ, չէ, հայր սուրբ, դարդս իմացէք . . . ես չեմ կարող, ես պիտի գնամ, հիմա տարան, անց կացրին. . .

Նա իր արտասուռ աչքերը դարձրեց ճանապարհի վրայ, ուզում էր գնալ։

—Սպասիր, սպասիր, այդ ինչե՞ր ես ասում, պատմիր, ո՞ւմ տարան և ո՞ւր։

—Աշխարհս քանդուել է, դու նո՞ր ես հարցնում, խօսեց գիւղացին դառնացած. էլ մարդ չըմնաց, բոլորին քշեցին, տարան թուրքերը։ Հաջի-բէկն իր ասածն արաւ։

—Ասա, չուտ արա, գոռաց Արզումանը։

—Բերդումն էինք. Ջերմուկի * մէջ, եկան, ինչքան կնիկ, երեխայ կար, բոլորին բռնեցին, տարան։

Վարդապետն ու Արզումանը ապշած միմեանց նայեցին։ Իսկ գիւղացին չարունակեց.

—Ջրի ճանապարհը քանդեցին, հացը ամբարից գողացան, Աստուծու կրակը թափեցին։ Այդ բոլորը երէկ, իրիկնադէմին պատահեց։ Հիմա գնում են, այստեղից շատ չեն հեռացել։

—Բո ինչդ են տարել, սառն կերպով հարցրեց վարդապետը։

—Ծառայ եմ, հայր սուրբ, մեր տնացուն են տարել, ամօթ չըլինի ասելը . . . Բայց, ձեզ մատաղ, մենակ մեր տնացին է։

—Մելիքի մայրը, կնիկը, երեխեն էլ կան, չարունակեց վարդապետը իր հարց ու փորձը։ Նա, կարծես, մի սովորական, անհետաքրքիր պատմութիւն էր լսում, այնքան սառն էր երևում։

—Բոլորը, բոլորը . . .

Այստեղ Արզումանը այլ ևս չըդիմացաւ. նա կատաղած գնաց գիւղացու վրայ իր մտրակը բարձրացրած, բայց այն խեղճը կուչ եկած՝ վարդապետին կպաւ և այդպիսով պաշտպանեց սարսափելի հարուածից։ Արզումանը իր առջևը տեսնելով իր ընկերին, յետ ու յետ գնաց, թռաւ, ձին հեծաւ և ասաց.

—Վարդապետ, ձիդ նստիր, չուտ, նրանք կըփախչեն մեր ձեռքից։ Շուտ, ժամանակն անցնում է . . .

—Չէ, քիչ սպասիր, պատասխանեց նա. մի չտասպիր, թող իմանանք թէ ինչ է եղել։ Դու, որդի, մի լաւ պատմիր անցքը, մի վախիր։

—Տօ, տունդ քանդուի, ինչ հէքիաթի ժամանակ է օրը վերջացաւ, բացականչեց Արզումանը և ոտով թեթև խփեց ձիու կողքերին. ձին տաքացաւ, սկսեց կատաղի ոստիւններ անել. միայն Արզումանի ձեռքն էր, որ սանձահարում էր կատաղած կենդանուն։

—Շուտ, ես գնացի, վարդապետ . . .

—Համբերութիւն, Թիւլի-Արզուման. ինչ ես կայծ ու կրակ դառել, լաւ իմացիր, որ այստեղ քեզանից պակաս տղամարդ չըկայ։

Թիւլի-Արզումանը չըպատասխանեց այդ խօսքերին, իջաւ իր ձիուց և մօտեցաւ դողացող գիւղացուն։ Սա արդէն պատմում էր Ջրաբերդի բոլոր տխուր պատմութիւնը։

—Սանամը, զարմացած կանչեց վարդապետը. խեղճ երեխայ, նրան խաբել են . . . Բօ, բօ, այդ ինչ է, ես նրան այդպէս եմ պահել։ Հիմա խեղճ երեխան բաւական վախեցել է։ Սանամը . . . Թուրքերի ձեռին . . . ո՞ւր ես, Մելիք-Հաթամ . . .

—Հիմա գնանք, Թիւլի-Արզուման, տխուր ժպիտը երեսին չարունակեց հայր սուրբը, երբ գիւղացին վերջացրեց իր պատմութիւնը։

—Այ տղայ. քեզ հետ եմ, այ հայ, դարձաւ Արզումանը դէպի գիւղացին.—ես քեզ պիտի սպանէի, լսում ես, պիտի սպանէի, որովհետև դու էլ այն վախկոտներից մէկն ես, որոնք խայտառակել են բերդի անունը։ Բայց դու ինձ հարկաւոր ես և ես քեզ եմ բախչում քո դատարկ գլուխը։ Կըգնաս, այսօր իսկ կըգտնես մեր Աւրաքօլուն, որտեղ լինի, կըճարես, կասես, որ երկու լաւ տղայ վերցնէ ու գայ, մեզ գտնէ Հարթ-Խամհատում։ Լսում ես, չուտ չարժուիր։

Վերջին խօսքերի հետ նրա մտրակը սաստիկ չըըմփաց, գիւղացու ճտոլը փաթաթելով։ Խեղճ մարդը կուչ եկաւ, բայց ցաւը մոռանալով, առաջ վազեց։

—Չասես թէ ձեռքիցս կըպրծնես, կանչեց Արզումանը—ինձ Թիւլի-Արզուման կասեն, կաչաղակ էլ դառ-

* Ջրաբերդը Ջերմուկ էլ է կոչւում։

նաս, քեզ կրկոտորեմ, թէ այս գիշեր Աւրաքօլին ինձ մօտ չըլինի։

Դիւղացին հեռացաւ կսկծալով. իսկ երբ մի երկու ծառի ետևն անցաւ, սկսեց բարձր ձայնով հեկեկալ. անտառի լռութեան մէջ այդ հեծեծանքը մարդու սիրտ կըկտրատէր, այնքան տխուր էր, չարագուշակ։

—Շատ անխիղճ ես, Թիւլի-Արդուման, խօսեց վարդապետը դառնութեամբ. նայէր, քեզանից բարձր Աստուած կայ . . .

—Դու չըգիտես, վարդապետ, այդ խեղճերը, այդ վախկոտ նապաստակները իմ հոգիս հանում են. դրանք չեն այս բոլոր ցաւերի պատճառը։ Տեսար, բերդը տուել են Թուրքին . . . Քո կարգը վկայ է, դրանց սպանելը դեռ քիչ է. վայ, տօ, մի լաւ միտք արա, տես, Ջրաբերդը թշնամու ձեռք է ընկնում։ Աստուած վկայ է, այծեր ածես նրա մէջ, այծեր, լսում ես, էլի այդպէս չեն անիլ, քարեր գլորելով հազար մարդ կըփախցնեն։

—Լաւ, թող մնայ, Տէրը քեզ հետ։ Դու այն ասա, հիմա մենք ինչ պիտի անենք։ Մենք ուզում էինք մէ իքի ընտանիքը Ջրաբերդից գողանանք և Սարգիս եպիսկոպոսի հետ Դանձակ տանենք։ Հիմա հարկաւոր է, որ Սարգսին թողենք մինչև որ գերիներին կազատենք։

—Ի հարկէ, ուրիշ ճար չըկայ. եթէ նրանք Շուշի հասած լինին անգամ, պիտի չըվախենանք, պիտի մտնենք այնտեղից գողանանք։

—Խեղճ, խեղճ իմ Սանամ, ասում էր վարդապետը իր ձին հեծնելով. ծնկանս վրայ պառած երեխան հիմա տես որտեղ է։ Նա, երևի, չըգիտէ թէ որտեղ է իր պապին . . .

Այնուհետև նրանք լուռ արշաւում էին լեռնային ծմակով։

Հ Ը Օ

(Կըշարունակի)

ՄՐՑՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Վէպ տիկին Դդպրէն-Լէֆլէրի

(Շարունակութիւն)

Արլան պատաւորութիւն համարեց մարդուն յայտնել, Բերնսոնի հետ իր ունեցած թղթակցութեան մասին։ Նաղվօրնի սովետնիկին շատ օտարոտի և մինչև անգամ անքաղաքավար թւաց, որ Բերնսոնն իրան իրաւունք է տուել նամակ գրելու, բայց այնուամենայնիւ նա իրան թոյլ չըտուաւ մի նկատողութիւն անգամ անել այդ առիթով։

Բերնսոնը Արլայի երևակայածից աւելի էլ յաճախ էր գրում։ Արլայի մի նամակին նա մի քանի նամակներով էր պատասխանում։ Նա այդ նամակները միշտ տալիս էր իր մարդուն կարդալու, թէև մարդը միշտ անհաճոյ, չոր և ծաղրական նկատողութիւններ էր անում նամակների վրայ, որոնք ոգեւորված էին երիտասարդական ոգեւորութեամբ և ազատութեան ու մտքի ջերմեռանդ երկրպագութեամբ։ Արլան իր պատաւորութիւնների վրայ այնպիսի հասկացողութիւն ունէր, որ անհրաժեշտ էր համարում ենթարկուել այդ անխորժութիւններին։

Բայց հետզհետէ նամակներն աւելի և աւելի սիրալիր էին դառնում, առաւել անձնական կերպարանք ստանալով։ Վերջապէս նա մի նամակ ստացաւ, ուր տողերի մէջ կարելի էր նշմարել կատարեալ սիրահարական բացատրութիւն։ Բերնսոնն այդ նամակում ասում էր որ Արլայի նամակները—որոնք դժբախտաբար շատ սակաւաթիւ էին—նրան մեծ երջանկութիւն են պատճառում. «Ձեր պատկերն ինձ միշտ հետևում է, ասում էր նա, և ոչ մի նոր տպաւորութիւն չէ կարող նրան ջնջել իմ մտքից. փորձութիւնները շատ տեսակ են, փորձութիւնները մանաւանդ շատ են պատահում այն երիտասարդ մարդոց, որոնք միայնակ թափառում են աշխարհի երեսին. այդ բոլոր փորձութիւններից ինձ պաշտպանում է միայն ձեր յիշատակը»։ Այդ յիշատակը, շարունակում էր նա, ինձ ասպէս ձգել է իր լիշանութեան տակ, որ ես չէի սպասում։ Անկեղծօրէն ասեմ ձեզ, որ ես այդտեղից հեռացայ մըտքումս հաստատ դնելով փորձել բոլոր զարձութիւնները, ձգել ինձ անելիւղ ամեն դժւարութեանց մէջ և ես կարծում էի թէ ոչինչ բան ինձ չէ կարող կանգնեցնել։ Սակայն ես տարում եմ երբև մի սպարտացի և զգւանքով երեսս դարձնում եմ ինձ պատահող բոլոր փորձութիւններից. գերմանական ուսանողութեան կեանքը այնքան էլ լաւ չէ բարոյական կողմից, բայց ես չեմ մասնակցում այդ կեանքի ոչ մի շէրտում։ Ինչու։ Ասում են, որ սիրեցեալ մօր յիշատակը յաճախ պաշտպանում է երիտասարդներին փորձութիւններից։ Կարելի է այդ ճիշտ էլ լինի։ Բայց իմ մխոս չէ մայրս։ Եթէ ես ուզիղ ճանապարհից շեղւեմ, ամբողջ աշխարհի երեսին մի մարդ չըկայ, որ ինձ համար վշտանայ։ Ես միայն ինքս ինձ եմ պատկանում և ոչ ոք չունիմ որ կամենար ինձ յետ կանգնեցնել վատնգից. դուք այդ բանն ուզղակի չէիք անի, որովհետև ինձ համար չէք հոգում և շատ քիչ էք հետաքրքրւում ինձնով, այն էլ կողմնակի։ Ես միշտ երևակայում եմ թէ երբ կանգնած եմ ձեր դիմաց, ինչպէս իմ դատաւորի առաջ. ես միշտ և անդադար մտաւորապէս փոխադրւում եմ ձեր պատշգամբի տակի աւազուտ ճանապարհի վրայ և խոստովանւում եմ ձեր առաջ. իսկ երբեմն ինձ թւում է թէ ես կանգնած եմ նոյն իսկ պատշգամբի վրայ, ինչպէս այն անմոռանալի օրը—և դուք նստած էք գլխակոր և լաց էք լինում ինձ վրայ. այդպիսի բոլէներում ինչեր չէի անի ես ձեր հաճութիւնը գրաւելու համար. այդպիսի բոլէներում ես ինձ ստեղծւած եմ համարում մի բան դառնալու համար մի... շատ մեծ մարդ։ Եւ ես ինչ չէի դառնալ եթէ դուք ինձ օգնութեան մեկնէիք գոնէ ձեր ճկոյթի ծայրը»։

Այս նամակն անկարելի էր ցոյց տալ Նաղվօրնի սովետնիկին։ Բայց Արլայի համար նամակը ծածկելն այնպէս անհաճոյ էր որ նա մի խիստ պատասխան գրեց, աւելի խիստ, քան կարող էր գրել ուրիշ հանգամանքներում։

„Թոյլ և բնաւորութիւնից զուրկ մարդիկ, գրում էր նա, շատ անգամ անձնատուր են լինում ցնորքներին, երևակայելով թէ կնոջ ուշադրութիւնը կարող է նրանց համար նկատակ լինել և նրանց դարձնել այն, ինչ որ նրանք կարող էին դառնալ իսկապէս սեփական ոյժերով, կարող էին դառնալ ուժեղ և բարի նրանց յամառ ու տոկուն աշխատութեան շնորհիւ։

Ես ցանկանում եմ իմ զաւակներիս ապագայում աւելի լաւ նեցուկ թողնել քան մայրական սիրոյ, սիրեցեալ մօր յիշատակը, հակառակ դէպքում ես ինձ շատ վատ դատախարակչուհի կըհամարեմ։„

Արլան վերջացրեց իր նամակը աւելացնելով մի նկատողութիւն թէ որովհետև իր ամուսինը միշտ կար-

դում է նրա նամակները, ուստի Բերնսոնը պէտք է գրի այնպիսի նիւթերի վրայ, որոնք նրա համար էլ հետաքրքրական են։ Վերջին նամակի մասին Արլան չըգրեց թէ բովանդակութեան պատճառաւ չէր ցոյց տուել մարդուն։

Այդ պատասխանը շատ խոր վիրաւորեց Բերնսոնին. նա եզրակացրեց որ Արլան վերջին նամակն էլ ցոյց է տուել մարդուն։

«Զսխազանց ցաւում եմ—պատասխանեց նա Արլային—որ իմ նամակս չէ շարժել նագիրնի սովետնիկի հետաքրքրութիւնը։ Եղէք այնպէս բարի, հաղորդեցէք նրան և այս տողերը. վերջին տողերն են, որոնցով ես ան-հանգիստ եմ անում թէ ձեզ, թէ նրան։ Իմ կարծիքով, մարքերի ազնուութիւնը և սրտի զգայնութիւնը պէտք է ունենան մարդկանց աչքում։

„Ակամայ մոլորու�թիւնը, որ մարդիկ յանցանք են համարում, կարող է, շատ անգամ, անհամեմատ աւելի ազնիւ լինել քան սառն և նեղ մտքով հասկացած պարտաճանաչութիւնը։“

Այս նամակը մեծ վիշտ պատճառեց Արլային. նա սաստիկ տանջւում էր մտածելով թէ ոմ գիտէ Բերնսոնը ինչեր կանի, կարծելով որ Արլան նրան մոռացաւ ու իրանից յետ մղեց նրան։ Նա շուտով նամակ գրեց, բայց շուտով էլ այդ նոյն նամակը յետ տուացաւ. ծրարի վրայ մակագրած՝ թէ նամակատէրը դուրս է գնացել քաղաքից առանց իր նոր հասցէն թողնելու։—Այդ ամառ Արլան այլ ևս չէր կարողանում առաջւան պէս զարթուութիւն գտնել աշխատութեան մէջ։ Նա շարունակ մտածմունքի մէջ էր և շուտ շուտ էր գնում անտառը իր սիրած տեղը և առանձնանում։ Նա երբէք այստեղ չէ եղել Բերնսոնի հետ միասին, սակայն նրան թւում էր թէ այստեղ ամեն մի ծառ նրա մասին է պատմում, նրան է յիշեցնում։ Եւ խստապէս անցեալ ամառանից սկսած նրա բոլոր մտքերը կենդրոնացել էին Բերնսոնի վրայ, թէև նա այդ բանին նոյնքան քիչ նշանակութիւն էր տալիս, որքան և իր սովորական երևակայութեանը։

Երբ նա գարնանն առաջին անգամ անտառ գնաց, ճանապարհը ծածկւած էր ադագին քանակութեամբ ընկած ու կտրտած ճիւղերով, բներով, ցախով, այնպէս որ անցնելն անհնարին էր։ Այդ երեսից ձգւած լեռնային կածանն, որի վրայ մարդկային ոտքի հետք անգամ չէր մնացել, արդեօք նման չէ՞ր նրա և Բերնսոնի յարաբերութիւններին։ Նա ծանր աշխատութիւն յանձն առաւ, նորից մաքրել ճանապարհը. ամեն օր նա այդ ճանապարհի վրայից կոյտերով թփեր էր քաշում և այդպիսով հետզհետէ, օրէցօր աւելի և աւելի էր մտնում դէպի անտառի խորքը։ Նրան թւում էր, թէ որքան աւելի ոտքը է հեռացնում կածանի վրայից, այնքան աւելի և աւելի մօտենում է իր ցնորքների աշխարհին։

Իսկապէս ի՞նչ էր ուզում նա։ Ինչի՞ էր ձգտում։ Մի՞թէ լաւ չէր լինի, եթէ ամեն բան առաջւան կարգով ընթանար և մի՞թէ վատանգաւոր չէ՞ր նորից տեսնել այն մարդուն, որն այդքան իշխանութիւն էր ձեռք բերել նրա վրայ։

Ո՛չ, ասում էր նա ինքնիրան։ Այստեղ վատանգ չէ կարող լինել. ի՞նչ վատ բան կարող է լինել այնտեղ, ուր մէկը սիրում է մի մարդու այնպէս՝ ինչպէս նա էր սիրում Բերնսոնին։ Այդ բոլորը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մտորմունք. նա մինչև անգամ չըգիտէր հաստատ—Բերնսոնը սիրում է իրան թէ ոչ և չէր հաւատում նրա սիրոյն. նա մինչև անգամ չէր կամենում որ կանդիստան իրան սիրէ. որովհետև բաւական էր որ նա մի խօսք անգամ արտասանէ իր սիրոյ մասին և այն ժամանակ Արլայի բոլոր մտորմունքները կըփշրւէին և նա ստիպւած կըլինէր նորից փախուստ տալ կանդիստանից, նորից կապել իրան այն շղթաներով, որոնցից նա ազատել էր իրան։ Արլան չէր ցանկանում նրանից սիրւած լինել, ոչ, նա միայն ցանկանում էր իրան իրաւունք ունենալ նրան սիրելու և սիրելու լռիկ, ծածուկ, առանց յոյսերի և ցանկութիւններին. սիրել՝ ինքն ըստ ինքեան նրա համար երջանկութիւն էր. միայն այդ էր նրա կեանքին միտք տալիս, միայն նրա համար արժէր ապրել. միայն այդ զգացման շուրջն էին վխտում նրա մտորմունքները և միայն այդ էր նա պատկերացնում իրան հազարաւոր տեսակ ձևակերպութիւններով։

Օրինակ, երբեմն նա երևակայում էր թէ թշնամ ու զօրքը քաղաքի դրան առաջ կանգնած է և ինքը դուրս է գալիս նրանց առաջ արմատենու ոստը ձեռին, ու կապում է վիրաւորեալների վէրքերը. մի մերձ ի մահ ռուս օֆիցէր սիրահարւում է նրա վրայ և խնդրում է թոյլ տալ մեռնելուց առաջ նրան համբուրել։ Նա կռանում է դէպի նրա շրթունքները և նրա համբոյրի հետ միասին ընդունում է և նրա վերջին ոգւոցը.—կամ թէ նրա երևակայութեան առաջ բացւում էր իրը թէ Քրիստոս կրկին անգամ իջել է աշխարհ և ինքը նստած է նրա ոտերի մօտ Մագդալինացի Մարիամի նման և լսում է նրա Աստուածային բարբառը. նրա սիրտն ամուր բաբախում է ուրախութիւնից, երբ նրա ձեռքը թեթև կերպով՝ կրպչում է իր մազերին։ Արլան շատ յաճախ էր այնպիսի երևակայութիւնների մէջ ընկնում ու այդ դէպքերում երջանկութիւն էր տիրում նրա ամբողջ ոգուն։

Նրա մէջ երբեմն բուռն ցանկութիւն էր ծագում նորածին մանուկ ունենալ. նա մեծ երջանկութիւն էր գտնում մանուկին խնամելու մէջ։ Նա երբէք մենակ չէր թողնում իր զաւակներին իրանց մանուկի հասակում։

Իսկապէս նա ոչ մի բանի չէր կարողանում նւիրւել բոլոր սրտով. նա միայն մտորմունքի մէջ էր գտնում կատարեալ և ազատ կեանք։

(Կըշարունակւի)

—

Ե՞Ր Բ...

Ե՞րբ կըբացւիս, գարնան ծաղիկ,
Զարդարելու իմ՝ սիրտըս,
Ե՞րբ կըբացւին դուռն ու երդիք՝
Ազատ կզգայ իմ՝ կուրծքըս։

Դու ե՞րբ կանցնես, ցրտոտ ձմեռ,
Դու, ծերունի՛ ըռնակալ.
Քեզ զրգւելու այլ չունիմ՝ սէր՝
Դու վիշտ դարձար ինձ համար։

Ե՞րբ կըբացւիս, նո՛ր արշալոյս,
Ե՞րբ կըբուժւի խորին վէրք,
Ե՞րբ կեանք կառնես, ցանկալի՛ յոյս,
Եւ դու՝ իմ՝ խենդ՝ կապւած երգ։

Յով. Կոստանեանց

Իմ նամակները օրիորդ Ցուսիկեանին

Թ.

Լօնդոնում նշանաւոր փողոցներում, մանաւանդ Սիթի անուանեալ թաղում անցուդարձը անհամեմատ մեծ է, քան Փարիզում, սակայն դիտողին աչքաբաց երեւում է, որ անցնողը ի զուր տեղը չէ գնում։ Փարիզում վայ էր, եթէ փողոցում մէկին մի բան հարցնէիր, օրինակ հէնց թէ այս փողոցը ինչպէս է անուանւում, նրա ձեռից չէիր պրծնիլ. ոչ միայն քո հարցի ամենամանրամասն պատասխանը կըստանայիր, այլ մի ամբողջ դասախօսութիւն և ճառ կըկարդար դիմացինդ և դու Աստուած կըկանչէիր, որ մի կերպ ազատւես այդ չանչախ խօսակցից։ Իսկ այստեղ անցնողը շտապ քայլերով գնում է, առանց ուշադրութիւն դարձնելու հարցիդ։ Բայց պէտք է այդ էլ ասեմ, որ երկաթուղիներում քարշակների, օմնիբուսների վրայ ծառայողները շատ ուշադիր են և սիրալիր, ու սրանց չէ կարելի վերագրել անգլիացիների վերաբերմամբ հազար ու մի պատմող առածները, թէ նրանք լուռ ու մունջ են իրանց ընկերակցի հետ և նրան գէթ մի բանով չեն զգուշացնիլ, եթէ տեսնեն մինչև անգամ, որ նա մի մեծ վտանգի մէջ է և իր մի խօսքը կարող է նրան ազատել։

Փողոցներում տիրում էր կատարեալ ազատութիւն։ Խմբեր ժողովւած այս ու այն փողոցում, նրանցից մէկը մի աթոռի վրայ բարձրացած ճառախօսում է և ունկնդիրները մեծ ազմուկով նրան համակրական թէ հակակրական ցոյցեր են անում. այդ փողոցի մի ուրիշ մասում հազարաւոր մարդիկ խմբւած սաստիկ ծափահարում են, մօտենում էք և տեսնում մէկը դրանցից ճառախօսում է ձեռին մի փոքր առարկայ բռնած։ Տեղեկանում էք, որ դա մի արհեստաւոր է, մի նոր գիւտ է արել, մի գործիք է հնարել և ահա ինքը գործի հեղինակը և կենդանի յայտարար է իր գիւտին։ Մի այլ անկիւնում դարձեալ խմբւած է ամբոխը. այդտեղ էլ մի անայտ նկարիչ իր արհեստն է ցոյց տալիս և փողոցի մայթի վրայ կաւեռով պատկերներ է նկարում իր տաղանդը ցոյց տալիս և ծառայութիւնը առաջարկում։



Բիրմինգհամ (Քրիստոսի) պալատը

Լօնդոնում շաբաթ օրը կէսօրից յետոյ ժամը մէկից բոլոր գործարանները, դրամանեակները, խանութները փակւում են և ժողովուրդը սկսում է զւարճանալ ու հանգստանալ։ Իսկ զւարճութեան տեղեր շատ շատ են այստեղ։ Լօնդոնի հիանալի պարկերը, գեղեցիկ շրջակայքը երկաթուղիների անհամար գնացքներով մի ժամւայ մէջ լցւում են ամեն դասակարգի, հասակի և սեռի բնակիչներով։ Մենք էլ շաբաթ օրը նախաճաշից յետոյ երկաթուղով մերոնց հետ գնացինք քաղաքից դուրս աշխարհիս հրաշալի և ամենաքանչելի Քրիստոսի պալատը։ Այս գեղարւեստական գրօսավայրը գտնւում է Լօնդոնից դէպի հարաւ Կէնդ կոմսութեան մէջ և քաղաքից երկաթուղիով մի ժամւայ ճանապարհ է։

1851 թ. Լօնդոնում Կ ա կ ս տ օ ն ը կառուցել էր Հ ա յ տ-պ ա ր կ ո ւմ ապակեայ դահլիճ միջազգային աշխարհանդէսի համար, որ աշխարհանդէսը փակւելուց յետոյ, մի ընկերութիւն գնեց այդ շինութիւնը և տեղափոխելով Սիդենհէյն՝ այնտեղ նորից կառուցեց։ Բայց անշուշտ, բարեկամս, կըհարցնես ինձ այդ ինչ տեսակ ապակեայ շինութիւն է, որ կարելի է քանդել և մի ուրիշ տեղ նորից կառուցանել։

Այս ապակեայ շինութիւնը, որ անուանւում է Քրիստոսի պալատ, բացառապէս շինւած է երկաթից և ապակիից։ Շատ հեշտութեամբ միացընւում են այդ հսկայ շինութեան բոլոր մասերը, որոնք միմեանց հետ ամրացրւած են միմիայն պտուտակներով։ Քրիստոսի պալատը Լօնդոնից այստեղ տեղափոխել են 1856 թւականին։ Այդ դիւթական շինութեան կառուցումը նստել է 15 միլիոն ռուբլի. պալատը իր ճեմելիքներով 112 դեսեատին տարածութիւն ունի։ Այս շինութեան վրայ դնացել է 589,000 փութ երկաթ, 30,160 փութ ապակի։ Եթէ բոլոր երկաթ սիւները միմեանց կպած մի կարգ շարելու լինին, կը հասնեն 35,152 վերստի, իսկ ապակիները եթէ փռեն գետնի վրայ, կըծածկէ 9 դեսեատին տարածութիւն։ Ապակիները միմեանց կպած մի շարք եթէ շարեն, դուրս կըգայ 181,386 սաժէն։ Այս վիթխարի շինութեան կամարների միջին բարձրութիւնը 85, իսկ երկարութիւնը 1,406 արշին է։ Շինութիւնը երեք յարկից է. ներքև զետեղւած է պա-

նարամա՝ ծովը իր բնակիչներով, երկրորդ յարկը, դիւթական դահլիճներն են, կատարեալ մի մեծ աշխարհանդէս, իսկ երրորդը վերնատունն։

Լօնդոնի երկու կողմից երկաթուղիների գնացքներ են դալիս այստեղ, մէկը կանգ է առնում բլուրի ստորոտում, որտեղից մինչև պալատը մի ապակեայ կօրիդօր է 337 արշին երկարութեամբ։

Դահլիճները, որ մարդ սրանց մէջ իրան մի երևակայական աշխարհում է կարծում, զարդարած են ամենահրմուտ գեղագէտների ճաշակով։ Այստեղ այնպէս հաչտ միացած են ատուածային երկու պարգևները—աղատ բնութեան բերքերը և մարդկային հանճարի և արուեստի պտուղները, որ մարդ դժուարանում է զատել բնականը արհեստականից։ Անդօր եմ, հոգիս, քեզ մանրամասն նկարագրելու այս հրաշալի և վերին ատիճանի զմայլեցուցիչ աշխարհը։ Պալատի ներքին յարկում զետեղած է, ինչպէս ասացի, ծովը իր բնակիչներով։ Երևակայիր քեզ մի չատ երկար դահլիճ, մէջի պատը ապակիով բաժանուած. դահլիճի մի կէսը պատկերացնում է ծովը, իսկ միւս մասը հանդիսականների համար է։ Ահա և այդ ապակիի միջով չատ պարզ տեսնում ես ծովի բնակիչներին, սկսած infusoriներից մինչև կէտ և ծովային մեծ կենդանիները։ Աշխարհիս բոլոր տեսակ ձկները, կրօկոդիլներ, խեցգետիններ, թռչող ձկներ, աչքները ճակատի վրայ, բերանները վզից ցած։ Ամեն մի տեսակ ջրային կենդանիների ցեղի համար առանձին բաժիններ կան և ջուրը դրանց մէջ զանազան բաղադրութիւն ունի, ծովային բոյսեր, քարեր, բուստեր հայլն, մի խօսքով ծովը իր յատակով և բնակիչներով։ Այստեղ զգեստաւորուած, պատրաստ կանգնած են լուղորդներ, իրանց լապտերներով, երեսներին ապակեայ դիմակներ և բերաններից ու ականջներից խողովակներ։ Մի քանի կոպէկ էք տալիս և մի ինչ որ բան վերևից զցել էք տալիս այս ծովի մէջ, օրինակ մի բանալի, մատանի, կամ սև փող և ահա լուղորդները մտնում են արհեստական ծովի մէջ և դուք տեսնում էք ածդահա անասուններով չըրջապատուած մարդը ծովի յատակից ինչպէս հանում է քո չպրտած իրը և քեզ բերում։ Ջրի տակից խողովակի միջով խօսում է քեզ հետ այդ մարդը, ատածդ լսում, կրկնում։ Ապակիի յետևից մարդ սարսափում է այդ զարհուրելի կենդանիներին ուղիղ նայել, իսկ այդ լուղորդը քիչ է մնում որ նրանց հետ պար բռնի։

Պալատի երկրորդ յարկը երևակայիր քեզ մի դիւթական, հրեղէն աշխարհ։ Ուրքան բորբոքես, հոգիս, երևակայութիւնդ, դարձեալ անկարող պիտի լինիս պատկերացնել քեզ այս վերին ատիճանի փառահեղ տեղը։ Իմ կարծիքով օդային ամրոցներ կառուցանելու փափաք ունեցող օր և գիշեր մտորողներն անդամ, եթէ մտանեն այս դահլիճները, կըխոստովանեն, որ իրանց բորբոքած երևակայութիւնը ոչինչ է այս չքեղութեան առաջ։ Հռովմէական, ասորական, արաբական փառահեղ դահլիճներ, իրանց ժողովուրդի նիստ ու կացով, երկրի բերքերով և բոյսերով։ Շատ աքանչելի է մանաւանդ արաբական մասը. մտնողն էլ չէ կամենում այստեղից դուրս գալ։ Դահլիճների բոլոր պատերը զարդարած են առաջնակարգ նկարիչների պատկերներով. կան չատ սիրուն արձաններ հայլն։ Դահլիճների չուրջ մի լայն կօրիդօր է, ուր զետեղած են ամեն տեսակ, աշխարհումս եղած մեքենաներից։ Նրանց վրայ բանում են հազարաւոր մարդ, կին։ Աչքիդ առաջ պատրաստում են ամեն տեսակ առարկայ և իրեր։ Իմ ուշադրութիւնը չատ դրաւեց մի մեքենայ, որի վրայ մի օրիորդ մետաքսի թելերից ժապաւէններ էր պատրաստում զանազան նկարներով և նախշերով։ Այդ մեքենայի վրայ բանող օրիորդն այնքան վարժուած էր իր արհեստի մէջ, որ աչքիդ առաջ ժապաւէններ էր պատրաստում տրուածդ նկարով մի քանի րոպէի մէջ։ Երկու ժապաւէն պատուիրեցի դրքերի մէջ դնելու համար և այդ օրիորդը իմ պատուէրով մի տաս րոպէում, առանց նկարին անդամ նայելու գործեց ժապաւէնները. մէկի վրայ Ցիսուսի Ծնունդը, իսկ միւսի վրայ Խաչելութիւնը։

Անվերջ գալերէյը մի աննկարագրելի ծառաստան է, պըճնուած հազար ու մի երանգ ծաղիկներով։ Գեղեցիկ չատրաւաններ, բոլորը գոյնզգոյն բիւրեղ, անթիւ թռչուններ իրանց դայլալիկներով, անհամար ճրագ ու լապտեր, մարմարեայ, ապակեայ աւազաններ, լճակներ հազար ու մի տեսակ փոքրիկ ձկներ մէջը պար բռնած։ Արձաններ, ծառերի արանքում, որոնցից չատ նշանաւոր է Վիկտորիայ թագուհու արձանը, որի պատանդանը հայելիից աւազան է, մէջը հազար երանգ ջուր, զարդարուած ջրային լողող բոյսերով։ Աշխարհիս բոլոր գեղագէտները և արհեստագէտները իրանց հրաշագործութիւնից մաս ու բաժին ունին այստեղ։

Գալերէյի ձախակողմը յատկացրուած է նուագահանդէսների համար։ Այս բեմի վրայ զետեղուում են 4,000 արտիստ իրանց գործիքներով։ Երեք տարին մի անգամ աշխարհիս բոլոր նշանաւոր արտիստները ժողովուում են այստեղ և մի կօնցերտ տալիս։ Իսկ չաբաթ օրերը սրանց փոխարինում է սիրողների խմբի սիմֆոնական երեկոյթները։ Երևակայիր քեզ 4,000 հոգուց բաղկացած համերգը։ Ցիշեցի մեր Կարա-Մուրզային իր խմբով։ Ուրքան հրապուրիչ էր դրանց համերգը և նուագածը։

Գալերէյի հիւսիսային մասում, որ անուանուում է գեղարուեստների պալատ, զետեղած են ամենագեղեցիկ նկարները գեղագրական-պատմական աշխարհի։ Ուրթ բաժանմունք ունի այս մասը և ժամանակագրական կարգով զետեղած են նկարներ, մարդկութեան քաղաքակրթութեան սկզբնաւորութիւնից մինչև այժմեան դարը։ Այցելուն չատ աշկարա տեսնում է երեք հազար տարիների, սկսած եգիպտացիներից մինչև վերջին դարերը քաղաքակրթութեան յառաջադիմութիւնը և գեղարուեստի զարգացումը։ Եգիպտական մասի չէնքը իր վեհութեամբ այցելուին սարսափ է բերում։ Հռովմէական բաժնում գտնուում են բոլոր դարերի ամենանշանաւոր ստեղծագործութիւններ։ Այստեղ են Եաստոնը, Իւնոնան, Վեներան։

Ալհամբրայի մասումն է գտանուում Մուհամմադի օրէնքով արգելած արձանը։ Այստեղ ասում են, եղել է մի չատ հրաշալի անտառ, որ 1866 թ. հրդեհը լափել է։

Բայց նամակս չատ է երկարում, հոգիս, իսկ ուրքան էլ քիչ գրելու լինիմ, այս դիւթական աշխարհի մասին, դարձեալ չըպիտի կարողանամ այս փոստին քեզ հասցնել. վաղը կըշարունակեմ նամակս, առայժմ ցտեսութիւն։

Քո ՐԱԴԱՄԸՍ

ԱՄԲՈՒՄԸ ԵՒ ՍԷՐԸ

Հաշտութիւն, ոգի, վշտերի հետ,
Բաւական է տոչորուես.
Հաշտութիւն մարդկանց օրէնքի հետ,
Գուցէ նրանց կրսիրես:

Հաշտութիւն սրտի ու կեղծի հետ,
Օրէնք է ատելութիւն.
Թոյն զգացմունք, նայիր յետ,
Ուրացնիր դու մարդկութիւն:

Սուտ է սէրը, ճիշտ են ասում
Մարդիկ, նրանց հաւատա.
Դու լաւ նայիր դրանց աչքում
Ու դրանց սիրտը կարդա:

* *
*

Միթէ սէրը ընդհանուր է
Եւ ամենքին է տրուած,
Թէ՞ երկնային դա մի հուր է,
Ընտրեալներին նուիրած:

Ինչու տատրակը մեռնում է,
Աղունակի մահ լալով,
Ինչու սոխակը մաշւում է,
Վարդենուն սէր երգելով:

Ո՛չ, ազատ է սէրն, անհաշիւ,
Անազգ, անհայր ու անմայր.
Միշտ կենդանի, զիշեր եւ տիւ
Միայն իր սիրոյն համար:

Ս. Հ.

ժամանակագրութիւն

Երեւանից մեզ հեռագրում են. Այսօր ստուգւում է ճեմարանի վերատեսուչ աբեղայ Նահապետեանի պաշտօնից հրաժարուելու լուրը:

—

Մենք լսեցինք հետեւեալ սիրտ ճնշող դէպքը, որ հաղորդում ենք առանց երաշխաւոր լինելու նրա ճշտութեանը.

—Այս օրերս Թիֆլիսի հայոց օրիորդաց դպրոցներից մէկում, վարժուհին դուրս է կանչում աշակերտուհուն դաս պատասխանելու. աշակերտուհին դասը չէ իմանում ու շատ նեհարած է երեւում: Վարժուհին իմանալով որ դա ընդունակ և միշտ աշխատասէր աշակերտուհիներից մէկն է, զարմանք է յայտնում, որ նա այս անգամ դասը չըգիտէ:

—Ինչու չես սովորել դասդ:

Աշակերտուհին լռում է:

—Չես պատասխանում, ինչու չըգիտես:

Աշակերտուհին յանկարծ հեծկըլտում է ու կամաց ձայնով ասում. «Երեկւանից ոչինչ չեմ կերել և մեր տանը ուրթ հոգի նոյնպէս ոչինչ չեն կերել» . . .

—

Բօրչալուի գաւառի Բօգալի գիւղից հաղորդում են „Нов. Об.», որ այնտեղ տարածած է տեղական գիւղական դպրոցի շինութիւնը: Աշակերտները շատ են, բայց ուսուցիչ չըկայ: Գիւղացիք ցանկանում են այնպիսի ուսուցիչ ունենալ, որ միևնոյն ժամանակ գիւղական գրագրի պաշտօն վարէ:

—

Թիֆլիսի քաղաքային դումայում երկուշաբթի վեցուսարի 14-ին քննուում էր Թիֆլիսեցւոց համար մի շատ կենսական խնդիր, որ է—մսի և հացի գները որոշելու խնդիրը: Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի մսագործները և հացավաճառները միշտ և հեռագրեթ բարձրացնում են կենսական այդ ամենակարեւոր պիտոյքների գինը: Դեռ անցեալ տարի քաղաքային ուպրավան որոշեց բոլորովին վերցնել տակսան և թողնել, որ մսավաճառները իրար մէջ մրցեն և այդպիսով էժանանայ միսը, բայց ընդհակառակն մսավաճառները միացան և բարձրացրին մսի գինը: Ամսոյս 11-ին Դումայի նիստում պարզուեց, որ կապալառուները տեղական զօրքին միս են տալիս փունտը 6 կոպէկով, մինչդեռ ժողովուրդն առնում է 9 կոպէկով և այն էլ ոչ լաւ միս. եթէ կապալառուն միսը տալիս է 6 կոպէկով, կընշանակէ նա գնում է ոչ աւելի քան 4 կոպէկով. ուրեմն մսագործները երկու անգամից էլ աւելի թանգ են ծախում միսը, հարստահարելով ազգաբնակութիւնը: Իրաւասուներից մէկը պ. Մ. Թամամշեան ասում էր, որ մինչև այժմ մսի գները ուպրավան էր որոշում, շուկաների վերակացուների հաղորդած տեղեկութիւնների համաձայն, իսկ այդ տեղեկութիւնները, ինչպէս մի քանի անգամ պարզուել է՝ բոլորը կեղծ էին և սուտ. մինչև անգամ պատահել է, որ կաշառք են կերել այդ վերակացուները, շուկայ բերուող անասունների թիւը քիչ ցոյց տալու համար: Այս բոլորն ասում էին նրանք, պաշտօնական անձինք—իրաւասուները. իսկ ազգաբնակութիւնը շատ լաւ գիտէ աւանց դրանց էլ որ այդ թոշակ ստացող և ոչինչ չանող վերակացուները (торговые смотрителя) ինչ չարագործութիւններ և կաշառակերութիւն էին անում անպատիժ մնալով ուպրավայի կողմից: Երկար վիճաբանութիւններից յետոյ որոշեցաւ «նոր գիներն հին տակերի մէջ ածել», այսինքն նշանակել մսի հացմար տակսա: Բայց միթէ դրանով կարժանանայ միսը կամ ուրիշ կենսական պիտոյքները: Քաղաքային մըսի խանութներ բանալու հարցը թողուեց անուշադիր . . . որովհետև այդտեղ աշխատանք է հարկաւոր գործադրել . . .

—

Վլադիկաւկազից մեզ գրում են. Այստեղ մի շատ վատ սովորութիւն կայ, որ է մանկահասակ փոքրիկ աշակերտուհիներին թատրոն տանել և այն էլ այն տեսակ ներկայացումների, ինչպէս են «На жизненномъ пиру», «Жена на прокатъ» և այլն: Պէտք է իմանան այդ մատաղ երեխաների ծնողները, որ դրանով ոչ թէ սերում են իրանց զաւակներին, ոչ թէ նրանց զարգացութիւն են պատճառում, այլ հասցնում են այնպիսի մի վնաս, որ ոչ ուսումնարանը և ոչ կեանքը չէ կարող ուղղել:

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ «տեղական երիտասարդութեան մէջ տիրում է անհամերաշխութիւն և ատելութիւն դէպի միմեանց: Ո՛չ մի գործ չեն կարողանում կատարել ընդհանուր ոյժով, այլ մէկը միւսին աշխատում է խանգարել»:

Այդ երեւոյթը մենք վերագրում ենք միայն տգիտութեան և պարապութեան: Եթէ Վլադիկաւկազի և ուրիշ տեղերի երիտասարդութիւնը գինու ու գարեջրի շիշերի չորս կողմը անմիտ դատողութիւններ անելը թողնէ և տոկուն աշխատանքով սկսէ աւելացնել իր գիտութեան պաշարը, այն ժամանակ ամեն տեսակ անհամերաշխութիւններ ինքն ըստ ինքեան կըչքանան:

—

Մեզ հաղորդում են, որ չուտով մի քանի մասնաւոր անձինքների ձեռնարկութեամբ կըբացուին խանութներ, ազգաբնակութեան էժան միս և հաց ծախելու համար: Մենք կատարելապէս համոզուած ենք, որ մասնաւոր անձանց այդպիսի ձեռնարկութիւնը բոլորովին կըջլատէ մենավաճառների ոյժը:

—

Հինգշաբթի, ամսոյս 14-ին Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցը կատարեց իր սովորական տարեկան հանդէսը։ Ս. պատարագին ներկայ էին քաղաքիս համարեա բոլոր ուսումնարանների հայ աշակերտները, ազգային դպրոցների հոգաբարձուները և ուսուցիչները։ Պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեց Ներսէս Ե-ի յիշատակին։ Ներսիսեան դպրանոցում հանդէսն սկսուեց մօտ ժամը 1-ին։ Հոգաբարձու պ. Յ. Տէր-Յովհաննիսեանը կարդաց դպրանոցի տարեկան հաշիւը, որից ինչպէս երևում է, առաջիկայ գարնան պիտի սկսի դպրանոցի նոր շինութեան կառուցումը վանքի հանդէպ ուսումնարանական հողի վրայ։ Հաշուի ընթերցանութեան ժամանակ ի միջի այլոց մենք լսեցինք 545 ր. ծախք (?) հոգեհանդիսաների համար։

Դպրանոցի տեսուչ պ. Սպենդերեան կարդաց ուսումնական տարուայ հաշիւը։ Աշակերտների երգեցիկ խումբը երգեհոնի (??!!) դաշնակցութեամբ երգում էին։ Ներկայ էր մեծ բազմութիւն։ Ի դէպ՝ երկու տարի առաջ երբ «Աղբիւրում» մենք առաջարկեցինք բարելաւել հայկական երգեցողութիւնը, մտցնելով երգեհոն և դաշնակ՝ մեզ ջանում էին հերետիկոս անուանել, և ենթարկել ինկվիզիցիայի։

—

Լուր ստացանք Ղարաբաղի դպրանոցի կալուածների դատի մասին։ Դատը տանուլ է տրուած։ Մանրամասնութիւնները կը հաղորդենք։

—

Լսում ենք, որ Վրաց ազնուականաց բանկի վարչութիւնը վճռել է թատրոնը չրտալ պ. Ֆօրկատիին, այլ դիտաւորութիւն ունի տալ վրաց դերասան պ. Արաշիդէին և տ. Սափարովային։

դեղարուեստ

Թատրոն

Ամսոյս 9-ին Քաղաքային Թատրոնում Լասալ ամուսինների բենեֆիսն էր։ Ներկայացրին Դէնբրիի և Դէմանարի յայտնի Don César դրաման։ Ներկայացումն անցաւ շատ յաջող, իսկ Լասալ ամուսինները իրանց չնորհալի խաղով ամբողջութեանը մի մեծ շուք էին տալիս։ Տարաբախտաբար թատրոնը լիքը չէր։ Բենեֆիցեանտները հասարակութեան կողմից ստացան վունջեր, պսակներ և ուրիշ ընծաներ։

Նոյն թատրոնումն էլ երեքշաբթի օրը երաժշտական և ուսուցիչ պ. Իպալիտեւ-Իվանովի բենեֆիսն էր։ Ներկայացրին բենեֆիցիանտի Aspa օպերան։ Թատրոնը լիքն էր և հասարակութիւնը մեծ ոգևորութեամբ ընդունեց բենեֆիցեանտին։ Սաստիկ տրամադրուած էին այդ երեկոյ պ. Կոշիչ, Զարուտնայեա, որ հիւանդութեան պատճառով մի կարճ ժամանակ չէր մասնակցում ներկայացումներին, և հասարակութիւնը, մանաւանդ յարգելի տիկնոջ բազմաթիւ աշակերտուհիները մեծ համակրական ցոյցեր արին նրան։ Միւս մասնակցողներն էլ վատ չէին, առաւել ևս որ լիքը թատրոնը և հասարակութեան անկեղծ ոգևորութիւնը ու տօնական ներկայացումն այնքան զգալի չէին կացուցանում մանր մունր թերութիւնները։ Բենեֆիցեանտն ստացաւ դափնեայ պսակ և ուրիշ թանդագին ընծաներ։ Հասարակութիւնը ճանապարհ դցեց պ. Իպալիտեւ-Իվանովին օրկեստրի վեղեցիկ մարշով։

Բանկային թատրոնումն էլ ամսոյս 13-ին պ. Կաշերինի բենեֆիսն էր։ Ներկայացրին Լերկեի ողբերգութիւնը՝ Трогирскій воевода. գործողութիւնը կատարւել է XVII դարում Դալմացիայում։

Գեղեցիկ խաղացին տ. Մայերովան, պպ. Կաշերին, Լէնի, Մէյերսօն։ Տարաբաղդաբար թատրոնը կիսով չափ դատարկ էր։

Հինգշաբթի, փետրուարի 14-ին բանկային թատրոնում հայ թատրոնական խումբը ներկայացրաւ Շիլլերի «Աւազակներ» դրաման։ Կարլ Մոորի դերը կատարում էր պ. Պետրոսեան, որն այս անգամ էլ ցոյց տուաւ, որ ուսումնասիրում է իրան յանձն առած դերերը։ Պետրոսեան—կարող ենք հանարձակ ասել, շատ լաւ կարող է խաղալ Կարլի դերը, եթէ աւելի լաւ անսամբլի մէջ դտնի։ Մի քանի տեսարաններում պ. Պետրոսեանի խաղը միանգամայն հիանալի էր, օրինակ պատերի և հօր հետ տեսարանը։ Երիտասարդ դերասանին մի բան շատ է վնասում. այդ այն է, որ նա չտասում է խօսալիս և երբեմն աղաւաղում է բառերը. պաուզաներ բոլորովին չունի. մինչդեռ դրանք անհրաժեշտ են մանաւանդ մենախօսութիւնների մէջ։ Լաւ դերասանը այնպիսի լուութիւն ունի, որ հազար արագախօսութիւնից լաւ է, այդ պաուզաների ժամանակ է որոշ դաղափարը մարմնանում հանդիսականների մէջ։ Այս անգամ խմբի մէջ երևաց և պ. Տէր-Դաւթեան պատերի դերում և ինչ ասել կուզէ, որ ամենայն բարեխղճութեամբ կատարեց իր դերը։ Պ. Տէր-Դաւթեանի ամեն մի շարժուածքը, ամեն մի նայուածքը, ամեն մի չեչտը արտիստական են և անջնջելի տպաւորութիւն են թողում հանդիսականների վրայ։ Լաւ էր և Շվարցերը—պ. Աւալեան և կարծում ենք, որ նա աւելի լաւ կըլինէր Ֆրանսի դերում։

Թատրոնը ի բաց առնելով օթեակները՝ համարեա թէ լիքն էր։ Այս անգամ էլ բացակայ էր Թիֆլիսի հայ beau monde-ը։

Գրականութիւն

Ստացանք պ. Վ. Փափազեանցի մի նոր պատկերը հայ-բոշաների կեանքից «Խաթ-Սաբա» վերնագրով։ Պատկերն արտատպած է «Մուրճ» ամսագրից, շատ մաքուր և գեղեցիկ թղթի վրայ։ Գինն է 15 կոպէկ։

—

Առիթ ունեցանք տեսնելու մի փոքրիկ տետր պ. Ղ. Աղայեանցի, որի վերնագիրն է «Ղ. Աղայեանց. Մի երես մեր նորագոյն պատմութիւնից», արտատպած Գրական և Պատմական հանդիսից», բացառապէս «Արութիւն և Մանուէլի» բաժանորդների համար, իբրև նուէր հեղինակից»։ Տպագրուած է Մոսկուա, Բարխուդարեանի տպ. բանում։

Մահագոյժ

Պրոֆէսոր տիկին Ս. Վ. Կովալևսկի

Գիտնական աշխարհը այս օրերս մի մեծ կորուստ ունեցաւ։ Աւելի զգալի է այդ կորուստը, որովհետև մեռնող գիտնականը կին է—տիկին Ս. Վ. Կովալևսկի, մատեմատիկական պրոֆէսոր Սոքհոլմի համալսարանում։ Եւրոպական և ռուս մամուլի բոլոր օրգանները լի են ցաւակցական յօդուածներով տիկին Կովալևսկու մասին։ Աչքի անցնելով տիկնոջ մասին գրուած կենսագրութիւնները, յիշողութիւնները և այլն մենք տեսնում ենք, որ այդ գիտնական կնոջ մէջ կանացի սրտի քնքշութիւնը զարմանալի կապով կապուած միացած է եղել գիտութեան վեհութեան հետ։ Տիկին Կովալևսկայա իր ամբողջ կեանքը նվիրել է մատեմատիկական ուսումնասիրութեան, միևնոյն ժամանակ միշտ մօտ մնալով գրական աշխարհին և օգտագործելով բանաստեղծութեամբ։ Բաւական չէ որ

Կովալևսկայա՝ հազուագիւտ է իբրև կին մատեմատիկոս—պրոֆէսոր, բայց նա հազուագիւտ է իբրև մարդ, որ գիտութիւնը միացնում է պօէզիայի հետ։ Տիկին Կովալևսկայայ իր բոլոր տուած քննութիւնների ժամանակ միշտ ապշեցրել է պրոֆէսորներին և միշտ արժանացել է առաջին մրցանակներին։ Նա վերջն արժանացաւ մատեմատիկայի դոքտորութեան աստիճանի, որին շատ քչերն են հասել։

Իբրև տիկին—պրոֆէսորի բնաորոշ խօսքեր, այստեղ բերենք մի կտոր նրա նամակից, որ ուղղած է յայտնի ռուս հեղինակ տիկին Շաբելսկուն.

„... Դուք զարմանում էք, որ ես կարողանում եմ պարապել մատեմատիկայով ու միևնոյն ժամանակ գրականութեամբ։ Շատերը շփոթում են մատեմատիկան թուաբանութեան հետ, որ շատ չոր է, բայց իսկապէս մատեմատիկան պահանջում է ահագին ֆանտազիա—երևակայութիւն եւ մեր դարու ամենամեծ մատեմատիկոսներից մինը բոլորովին ճիշտ է ասում թէ՝ չէ կարելի մատեմատիկոս լինել առանց հոգով պօէտ լինելու. Պէտք է մի կողմ ձգել հին նախապաշարմունքը, իբր թէ պօէտը պէտք է հեղած բաներ երևակայէ եւ նկարագրէ, թէ ֆանտազիա եւ մտացածին ցնորք միևնոյն է. ինձ թւում է որ պօէտը պէտք է տեսնէ այն ամենը ինչ որ ամենքն էլ տեսնում են միայն պօէտը պէտք է տեսնէ աւելի խոր։ Այդ միևնոյնն է անում եւ մատեմատիկոսը...„

Երևի մեր տիկիններին չեն հաւատալ թէ այս բոլորն ասողը մի կին է, որ ծառայեց գիտութեան և դավնի պսակ տարաւ գերեզմանը գիտնական աշխարհից։

մամուլի տեսութիւն

Բագուի «Каспій» լրագիրը վերջերս մեծ ողորմութիւն է ցոյց տալիս կենսական մի քանի խնդիրների մէջ, բայց ինչպէս երևում է, այդ յարգելի լրագիրը հարցերին մօտենում է կեղևի կողմից և չչափում է միայն կեղևը, շատ անդամ առանց թափանցելու խնդրի ներսը և ուսումնասիրելու նրան։ Մեզ վրայ լաւ տպաւորութիւն է անում լրագրի եռանդը, որ ցոյց տալու համար բերում ենք այստեղ մի նմուշ։ Լրագիրը խօսելով տեղական նաւթային հողերի անկարգ իրացուցման մասին և նախատեսնելով, որ այդ հանդամանքը կարող է վնասել լրագրի գոյութեանը, ասում է ի միջի այլոց.

Պետական գաթայի չորս կողմը ցատկոտող լէգէօնը մեզ վրայ նայում է հասկանալի սրտի ցաւով, ինչպէս մի արգելարդիի վրայ եւ ամբողջ քանակներ է կազմում մամուլի յանդուգն օրգանի դէմ, շարունակ մտածելով թէ ինչպէս անէ որ մեզ ազմէ, ծակը մատեցնէ, անվնաս դարձնէ եռաչդն.

Այսօր մեզ դատի կոչմանն մեր մի ընչին արարքը անանարկութիւն համարելով եւ տուգանքի կենթարկին 1039 յօդ. հիման վրայ. վաղը գող աւազակին մէկը իբր թէ իր հայհոյուած պատիւը վերականգնող մաքրելու համար կարող է մինչեւ անգամ ընտ նստեցնել մեզ. վաղը չէ միւս օրն էլ լոյս կընկնի մեր իսկական գայլերից մէկը (դրանք անթիւ են) եւ մեզ կուլ կտայ ամբողջովին . . .

Ուրեմն մենք ցած դնենք մեր զէնքը, զրահը փոխենք կեղտոտ վրձինի հետ եւ պէշերս սեղմած սպասենք իբրեւ լուռ վկաներ մեր չորս կողմը կատաղող դիւական խնջոյքին.

Երբէք...

Գեղեցիկ խօսքեր են, լի եռանդով ու անկեղծութեամբ. ամեն մի բարեխիղճ հրապարակախօս չորս ձեռով կստորագրի այս տողերի տակ, բայց խնդիրը նրանումն է, որ այդ ահագին սարը ծնում է մի շատ չնչին մուկն։ «Каспій» լրագիրը այս բոլոր գեղեցիկ փիլիսոփայութիւնն անում է ցոյց տալու համար, որ Բագուի նաւթային հողերը տեղական դիւղական ազգաբնակութեան ձեռից անցնում են, անցել են և շարունակ անցնում են այն մարդկանց ձեռքերը, որոնք օգտւում են բնութեան այդ առասպելական հարստութիւնից։ Տարօրինակ, զարմանալի լոգիկա։ Մարդու ծիծաղն ակամայ գալիս է, երբ կարդում է «Каспій» լրագրի № 33 և 34-ի առաջնորդողները։ Ի՞նչ գիւղական ժողովրդի իրաւունքների մասին է խօսում լրագիրը՝ յայտնի չէ և արդեօք լրագիրը ճանաչում է այն տարրը, որի իրաւունքները իբր թէ պաշտպանում է։ Ցարդելով լրագրին մի բոպէ մտածում էք թէ գուցէ այդ յօդուածները դիսերտացիա են մի որ և է քաղաքատնտեսական շկոլայի ուղղութեան մասին, գրուած օրինակ Մարքսի, Միլլի, կամ Լասսալի կամ Ադամ Սմիթի տէօրիաների բացատրութեան վրայ, բայց դրանց ոչ մէկին էլ չէ մօտենում յօդուածագիրը, այլ հէնց այնպէս դրել է էլի «что Богъ на душу положитъ», «по широкой русской натурѣ»։ «Արի-չի մի վառաւոր պաշտպանեմ գիւղացիների իրաւունքը», մտածել է յօդուածագիրը։ O sancta semplisitas!

Մենք առ այժմ ժամանակ չունինք պօլեմիկա ոկսել «Каспій-ի հետ, այն էլ այդպիսի մանկական մտքերի համար, այլ միայն առաջարկում ենք այդ յօդուածագրին ակնոց հագնէ, մի բինոկլ վերցնէ և բարձրանայ Բագուայ բարձր վիշկաներից մէկի վրայ և լաւ դիտէ Բագուն ու մտածէ. յետոյ իջնէ ու կանչէ իր տունը մի ծերունի սաբունչեցի անաչառ թուրքի և նրան հարցնէ, թէ սրանից մի 30-50 տարի առաջ այսպէս էր Բագուն։ Բայց այդ ով արաւ. սաբունչեցի կամ բիբէյբաթցի Մաշադի-Հաճի-Իսրաֆիլ-Մամմադ-Ասլան-Բիզա - Բէլբալայի-Փաչա-Օղլին, թէ կրթւած կուլտուրական տարրը և գիտութիւնը։ Բնութեան օրէնքն է, յարգելի «Каспій». կուլտուրայի անընդունակ տարրը պէտք է զիջանի իր իրաւունքները ժրաջան և քաղաքակրթութեան ընդունակ ժողովրդին։ Մի վրդովւէք. եթէ Բագուայ արդիւնաբերութիւնը չըլինէր, չէր լինի և «Каспій»ն։ Իմացէք, որ տելեֆոնով խօսող Մաշադի-Իբրահիմ—Նազիմ—Բեազիմօղլիները չեն «Каспій»-ի ծնունդի առիթ տուողները և նրան սնդողները. . . Վերջապէս . . .

—

Եւրոպական թերթերից առաջ ենք բերում մի շատ հետաքրքրական աղիւսակ այն գումարները, որ ծախսում են եւրոպական պետութիւնները „պատերազմական պիտոյքների“ համար։ Ահա այդ աղիւսակը.

		Արծաթ ռուբլի
Ֆրանսիա	Զօրք	1,061,450,000
	Նաւատորմ	392,460,000
	Ընդամենը	1,453,910,000
Ռուսիա	Զօրք	1,035,000,000
	Նաւատորմ	182,000,000
	Ընդամենը	1,217,000,000
Անգլիա	Զօրք	627,050,000
	Նաւատորմ	403,740,000
	Ընդամենը	1,030,790,000
Գերմանիա	Զօրք	798,160,000
	Նաւատորմ	87,688,000
	Ընդամենը	885,848,000
Աւստրիա	Զօրք	488,110,000
	Նաւատորմ	40,072,000
	Ընդամենը	528,182,000
Իտալիա	Զօրք	401,446,000
	Նաւատորմ	120,088,000
	Ընդամենը	521,534,000
Իսպանիա	Զօրք	235,800,000
	Նաւատորմ	61,33[illegible],000
	Ընդամենը	297,136,000
Ընդամենը	Զօրք	4,647,01[illegible],000
	Նաւատորմ	1,287,3[illegible],000
	Գումար	5,93[illegible],4[illegible],000

Այս թուանշանները վերցրած են Հռովմի անգլիական դեսպանատան քարտուղար պ. Դերլինգի զեկուցումից։ Ուրեմն երևում է որ Եւրոպան իր բոլոր եկամուտների գրեթէ $^1/_3$ մասը ծախսում է գինուորական պէտքերի համար։ Նոյն այդ պետութիւնները ամենքը միասին ծախսում են ժողովրդական լուսաւորութեան համար տարեկան 169,430,000 ռուբլի. մի գումար, որը գինուորական ծախսերի առաջ ծիծաղելի է երևում։ 1882 թուին եւրոպական այդ 7 պետութիւնների ազգաբնակութիւնը բաղկացած էր 302 միլիոն հոգուց, դրանք վճարում էին գանձարանին ինչպէս թէ ուղղակի և թէ կողմնակի հարկ տարեկան 3,447,000,000 ռուբլի արծաթ. ուրեմն մարդագլուխ տարեկան 11 ռ. 40 կոպ.։ Վեց տարուան ընթացքում ազգաբնակութիւնը 320 միլիոնով աւելացաւ և հարկերն էլ աւելացան մինչև 3,763,000,000 ռ. տարեկան, այսինքն 11 ռ. 75 մարդագլուխ։ Այսպիսով ազգաբնակութիւնը աճում էր վեց տարում 6%, իսկ հարկերը 9%, այսինքն ճիշտ 50% աւելի ազգաբնակութեան աճելուցը։

Այս առթիւ „Заря“ շաբաթաթերթն ասում է.

Հնարաւոր է արդեօք մի մարդ մենհատական ձգտումով, կամ հասարակական միաւորութեամբ ծառայէ քրիստոնէական սիրոյ ու ճշմարտութեան իդէալներին, երբ աշխարհի լուսաւորեալ մասը ազգաբնակութեան համար ծախսում է հրացանի—3 ռուբլի, իսկ լուսաւորութեան 50 կոպէկ։

—

խառն լուրեր

Էլեքտրական լոյսն առողջապահական տեսակէտից։ Պրոֆէսսոր Պրեսս Բրայտոնում „Առողջապահական ինստիտուտ“-ի անդամների համար մի շատ հետաքրքրական դասախօսութիւն տուաւ էլեքտրական լուսաւորութեան օգտակարութեան մասին առողջապահական տեսակէտից։ Ցարգելի պրոֆէսսորն ապացուցանում է, որ էլեքտրական լուսաւորութիւնը չէ ապականում սենեակի օդը, այնպէս, ինչպէս լամպան ու գազը, որոնք սենեակում ծծում են ածխաթթուն քանակութեամբ թթուածին և դրա փոխարէն սենեակը լցնում են օդը չափազանց տաքացնող ջառադայթաւոր ջերմածինով։ Պրոֆէսսորը նկատում է, որ մինչև այսօր, Անգլիայում օրէնսդիրը նշանութիւնը օրէնք չէ սահմանել վնասակար գազերով օդն ապականելու դէմ։ Ածխածնի ժանգը—մահացու թոյն է։ Ածխաթթուն նոյնպէս վարակում է օդը։ Ածխաթթուն քանակութեամբ թարմ օդ է հարկաւոր, որ կարողանայ այդ վնասակար գազերի ազդեցութիւնը չնչատել սենեակի մէջ։ Իսկ էլեքտրական լոյսը համապատասխանում է առողջապահական կանոններին և այդ լոյս գործածողներն իրանց անհամեմատ առողջ և կազդուրուած են զգում։ Իբրև ապացոյց իր խօսքերի պրոֆէսսոր Պրեսս մատնացոյց եղաւ Լօնդոնի օրինակելի վարժարանի բանկերից մէկին վրայ, ուր աշխատում են 1200 հոգի և ուր հիւանդութեան դէպքերը կէսից աւելի պակասել են սկսած այն օրւանից, երբ այդ հաստատութեան մէջ մտցրել են էլեքտրական լուսաւորութիւնը։—(Bull. de L'éléctricité).

—

Զգոյշ կացէք փոշոտած, թողած պրոտուկներից։ Մի շատ վատ սովորութիւն կայ մեզանում, մանաւանդ գաւառներում։ Այդ այն է, որ շատ անգամ պտուղներն ուտում են առանց նրանց վրայի փոշին և կեղևը մաքրելու։ Շատերը խաղողը չեն լւանում, ասելով թէ լւանալուց խաղողն «անհամանում է»։ Միւսները տանձը չեն կճպում բերելով մի անմիտ պատճառ, թէ «տանձի լուղը նրա կեղևի մէջն է»։ Բայց այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ տգիտութիւն, ծուլութիւն և մի կողմից ագահութիւն։ Նշանաւոր բժշկի շնչերը այդ մասին տպել է իր հետաքրքրական փորձերը Վենայի բժշկական թերթերից մէկում և ահա ինչ է ասում. «Պտուղների վրայ եղած փոշին և մինչև անգամ խոշորացոյցով երևող մամուռն իրանց մէջ բովանդակում են թոքախտի բակտէրիաներ (որդիկներ)։ Պ. բժշկապետը փորձել է փոշոտ խաղողի լւացած ջուրը ածել ծովային խոճկորների ստամոքսի մէջ և այդ կենդանիները վարակուել են արագընթաց թոքախտով։ Այդ և ուրիշ անթիւ վնասներն ի նկատի ունենալով պէտք է մեզ ամենայն կատարել բժիշկների խորհուրդը 1) մեզ, որ և է պտուղ ուտելուց առաջ, նրանց ջրով լւանալ, մանաւանդ խաղողը, 2) պտուղները կճպել, եթէ մինչև անգամ նրանք հէնց նոր լինեն կարած ծառից։

—

Լօնդոնում տպագրւում է Շէքսպիրի հեղինակութիւնները, այնքան փոքր դիրքով, որ կըտեղաւորւի ժիլետի գրպանում։

սուրհանդակ

Վարդաշէն—Ա. 8. Ա. Թողէք ոտանաւորներ գրելը, դա „թան չէ ամին մարդու բան չէ“։ Կարդացէք, կարդացէք եւ կարդացէք։ Ցաւիտեան պէտք է սովորել. Տգիտութիւնն ամօթ չէ, բայց չսովորելը ամօթ է.

Շատերին—Կարդացէք վերևի պատասխանը.

Երեւան—Ս. Օ. Իսահակ էք, ի՞նչ էք. Մտէք ծխական դպրոցի առաջին դասատուն ու սկսեցէք այբուբենից, կամ աւելի լաւ է մտէք կօշկակարի աշակերտ եւ 'ի զուր մի փշացնէք թուղթ ու թանաք.

Շուշի—Սրգամ. Չենք տպագրի.

Երեւան. Ստեփան Տէր-Ստեփաննոսեան—Չգիտենք ի՞նչ հիման վրայ դուք պէտք է բացառութիւն կազմէք հազարաւոր բաժանորդների մէջ. Խմբագրութիւնը քափալի խանութ չէ եւ իր օրէնքներն ունի. ստորագրութեան պայմանները՝ տպագրւած են №№-ների ճակատին. Ի զուր էք աշխատում ձեր բուխալտերիայի հաշիւները մոցնել մեր խմբագրութեան մէջ. Մտածը չէ վերադառնում. այս մէկ, երկրորդ. „Своимъ уставомъ въ чужой монастырь не лѣзутъ„.

Բազու. Ս. Ս. Խնդրում էք որպատասխանը Ս. Ս. „Լիտիօրներով“ գրենք.

„Ով եասկան
Անթիւ գործեր
Աբագութեամբ
Լուծեր սանձեր
Սա անասնի
Ատիճանի
Է արժանի.“

Ֆիլ. պարոն. Ատտուծոյ սիրուն „լիտիօրներով“ եւ լիքեօռներով աղաչում ենք ձեզ ազատել մեզ ձեր „լիտիօռներով“ ոտանաւորներից.

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրուարի 12-ին

Լօնդոնի վրայ	10 ֆունտ արժէ	85 ռ.	15 կ.
Բերլինի —	100 մարկ —	41 „	82 „
Փարիզի —	100 ֆրանկ —	33 „	65 „
Ոսկի —	— արժէ	6 „	86 „
Մաքսային կուպօնները	—	137 „	25 „
Արծաթ — —	— —	1 „	06 „
Բօրսային դիսկօնտներ	—	3 $^3/_4$	05 „
Պետ. բանկի 5% տոմս	—	103 „	— „
— — —	— 2-րդ —	102 „	50 „
— — —	— 3-րդ —	102 „	50 „
— — —	— 4-րդ —	102 „	50 „
— — —	— 5-րդ —	102 „	50 „
— — —	— 6-րդ —	102 „	50 „
6% ոսկեայ բէնտա		145 „	25 „
4% „ փոխառութիւն		— „	— „
Արեւելեան 5% փոխ. 1-ին շրջ.		103 „	— „
— — —	2-րդ	103 „	— „
— — —	3-րդ	104 „	— „
Ներքին 5% առաջին փոխառու.		236 „	60 „
— — երկրորդ	—	228 „	— „
Պետական. երկաթուղ. բենտա.		104 „	— „
5 $^1/_3$% բէնտա		102 „	— „
4% ներքին փոխառութիւն		095 „	62 „
5% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկ		102 „	50 „
4 $^1/_2$% գրաւական թղթ. կալ.			
փոխ. կրեդիտ. ընկ. մետալ.		140 „	— „
— — —	թղթադ.	103 „	— „
Պետերբուրգի քաղաք. կրեդիտ			
ընկերութի օբլիգացիաները		101 „	37 „
Մոսկվայի քաղաք- —		100 „	12 „
Օդէսայի — —		101 „	37 „
Թիֆլիսի — —		— „	— „
Դրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկի		— „	— „
— — Քուրայ. — —		— „	— „

Ս. Պետերբուրգի բորսայի տարմաղրութիւնը թոյլ է։

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեան

ԿԱՀԿԱՐԱՍԻԲԻ (Մեբելի) ՄԱԳԱԶԻՆ

Գդր. Պապյեանցների

Վաճառում են և վարձով են տալիս ամենայն տեսակ կահ կարասիք.—սեղաններ, աթոռներ, կահաւորակներ, բազկաթոռներ, պահարաններ, մահճակալներ, լացարաններ, Պատուէրի համաձայն պատրաստում ենք ամբողջ տան համար պէտք եղած կահ կարասիք ձեռնտու գներով։ Մագազինը գտնուում է Նելսիսեան դպրոցի դէմ ու դէմ։ 1—3

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Վ. ՓՓՓԱԶԵԱՆՑԻ

Գինն է 5 կոպ

Հ. ՇԱՀԲԱԶԱՆՑԻ

ԳԵՂԱՐԻՆՏՍԱԿԱՆ ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆԸ

(Литографія)

Թիֆլիսում. Բարեւանդեանի փող., իշխ. Թումանովի տ. № 8 մասնաւորապէս է տալիս տարբեր տպագրութիւններ, որ կատարուում է վերոյիշեալ մեքենայով գրաւոր ամենայն գեղեցիկ ձեւերով։

ԱՐԳԱՍԻՏ ՄԵՔԵՆԱՅ

Հրամայեցէք ունենալ մեր տպարանի գործարանի ԱՆՀԱՄԵՄԱՏ ԱՐԱՐՈՂ ԵՎ ԱՐԴԻՒՆ ԳԻՆ ունեցող տարբերակներ. ՄԱՆԱՒԱՆԻՆ կրնամ ձեզ ցանկացածներ է պատրաստել։ 1—10

Une française désire une place de gouvernante.

Հասցէ. Почтовая улица, гравюрное заведеніе Дубелира. 2—3

Շարունակւում է ներկայ 1891 թ. բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

պատկերազարդ ամսագրի եւ

ՏԱՐԱԶ

պատկերազարդ շաբաթաթ.

Աղբիւրի տարեկան բաժանորդագինն է 3 ր. 28 կ. իսկ Տարազինը 6 ր.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція Агбюръ կամ Таразъ

Երաժշտական Գործիքների

Մ ա գ ա զ ի ն

Գ. ԿԵՐԵՐԻ

Բաժանմունքը գտնուում է Բարիաթինսկի փողոցում „Աղբիւրի եւ Տարազի“ խմբագրութեան տակ.

Ընդունուում է զանազան պատէրներ երաժշտական ամենայն տեսակ գործիքների թէ նորերի և թէ կարկատանի։ Զութակի լարեր ամենալաւ տեսակները։ 1—3

Դ. ԱՂԱՅԵԱՆՑ

Բանաստեղծութիւններ.

Գինը . . . . . 1 ր. 50 կ.

Ուսուցչուհի.—պարապում է Ֆրանսերէն և Գերմաներէն դասերով. հասցէն իմանալ „Տարազի“ խմբագրատանը։

Уроки армянскаго языка, армянской исторіи и исторіи армянской литературы. Спросить въ конторѣ редакціи „Агбюръ и Таразъ“. 1—10

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ստացել է արդէն Թիֆլիսում և ծախւում է Կենդրոնական և Աղբիւրի վաճառանոցում։

Գինը 1 ռուբ.

Ճանապարհածախսը գնողի վրայ.

Մի սառնամանի մասնիկ կամ-
ուրջ դիպչելով ամենայն
ինչ, ինչպէս ասում է գիտնականը
Մարտինեանը, դարձնում է
սառնամանիք։ Ամենայն
ինչ, որ գտնուում է դեռ-
ագիրի մէջ, ինչպէս ասում
է գիտնականը Մարտինեանը,
դարձնում է սառնամանիք։
Ամենայն ինչ, որ գտնուում
է դեռ-ագիրի մէջ, ինչպէս
ասում է գիտնականը Մարտի-
նեանը, դարձնում է սառնա-
մանիք։ Ամենայն ինչ, որ
գտնուում է դեռ-ագիրի մէջ,
ինչպէս ասում է գիտնական
Մարտինեանը, դարձնում
է սառնամանիք։ 1—5

Լամպաների, կանթեղների Վենայի աթոռների ու պաստառների Դէպօ

Ե. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Դվորցովի փ. Ծովիանեանի տ.

Ահագին ընտրութիւն ամենատեսակ ապակեղէն զարդերի, սեղանի բաժակների, ծաղկամանների, ափսէների, ամենարնտիր պաստառների և այլն։ 1—5

ԱՐՕՐ

ԳԵՂԱՐԻՆՏՍԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ»

Պատկերազարդ հանդէսների

Տպագրում է ամեն լեզուներով գրքեր, լրագրեր, դասակներ, ՍՑԵՑՈՒՄՍԵՐ, պատկերազարդ ամեն տեսակ հրատարակութիւններ, իր վրայ առնելով ԿԼԻՇԵՆԵՐԻ փոքրագեղ տալը, ՊԱՏԿԵՐՆԵՐԻ նկարելը, ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ, ԹՈՒՂԹԸ, ԿԱԶՄԵԼՆ ու ԲՐՕՇԻՒՐ ԱՆԵԼԸ։

Հասցէն՝

Тифлисъ, уг. Головин. просп. и Барят, ул. Художественная Типографія „АРОРЪ“.

Ամենայն տեսակ պատրաստի զգեստների պահեստ և խանութ

Ն. ԽՈՒԴԱՆԵԱՆՑԻ

Միքայելեան կամուրջի վրայ, Միրզոէվի խանութներում։ Զգեստներ կան թէ երեխաների եւ թէ հասակաւորների համար եւ վաճառում են ամենաձեռնտու գներով։ 1—3

Օրացոյցներ 1891 թուականի,

Ր. կ.

1. Ծաղկի — 5
2. Նոյնը ընտիր թղթի վրայ 20
3. Գրպանի պատկերազարդ 15
4. Նոյնը ընտիր թղթի վրայ 50
5. Մեծադիր պատկերազարդ սեղանի լուսապատ շատ կարեւոր տեղեկութիւններով — 30
6. Նոյնը ընտիր թղթի վրայ 1 —
7. Կանանց Տարեկան յատկանշ. կարեւոր տեղեկութիւններով։ գեղանց 40
8. Նոյնը ընտիր թղթի վրայ — 1 —
9. Պատի—հատուածական — 50
10. Պատի—ամբողջ օրացոյց

Դէնիել՝ Тифлисъ Контора Ред. „Агбюръ“.

Тип. Ароръ Я.Назарьянъ, уг. Гол.пр. и Бар. ул. Дозволено ценз. 16 февраля, Тифлисъ.